ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 08/2024-Վ/Վ

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 14 օգոստոսի, 2024 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի նկատմամբ 2024 թվականի հունիսի 4-ին վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված թիվ 08/2024-Վ/Վ վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 16-ի «Իրավաբան.նեթ» լրատվական կայքի «*Ձեր տեսակը, մաքսիմում ինչ կարող է անել, հաչալն է». Ավինյանը՝ Մանուկ Սուքիասյանին*» վերտառությամբ հրապարակումը[1] 2024 թվականի հունիսի 4-ին կայացրել է Տիգրան Ավինյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ

[1] https://iravaban.net/472071.html

խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին թիվ 08/2024-Վ/Վ որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում).

1.1 Ըստ հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության՝

«Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն ավագանու՝ 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի ընթացքում նկատողություն է հայտարարել «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մանուկ Սուքիասյանին և «Հանրապետություն» խմբակցության անդամ Անի Խաչատրյանին այն բանից հետո, երբ նիստում վիճաբանություն է սկսվել իշխող և ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների միջև: Նիստի ընթացքում, ավագանու անդամ Մանուկ Սուքիասյանը, արձագանքելով «Հանրապետություն» խմբակցության անդամ Անի Խաչատրյանին, մեջբերել է հետևյալ խոսքը՝ «...հայտնի խոսք կա՝ շունչը[2] հաչում ա, քարավանը շարունակում ա իր ճանապարհը, և ամեն հաչացող շան հետևից, որ քար նետենք, մենք կարող ա տեղ չհասնենք, բայց պիտի արձանագրենք, որ «Մայր Հայաստան»-ի փեշերից կախվելը հացուջուր ա դարձել շատերի համար, բայց էդ խոլերան մի օր մաքրվելու ա բոլոր կառավարական կաբինետներից»: Մանուկ Սուքիասյանի ելույթի ժամանակ միջամտել է Անի Խաչատրյանը, ինչից հետո փոխադարձ վիրավորանքներ են հնչել: Քաղաքապետ Տիգրան Ավինյանը, հունից դուրս գալով, սկսել է բղավել՝ Մանուկ Սուքիասյանին ի պատասխան ասելով՝ ***«Ձեր ականջները կտեսնեք, ապագայում իշխանություն չեք տեսնի: Ձեր տեսակը, պարոն Սուքիասյան, մաքսիմում ինչ կարող է անել՝ հաչալն է, և կարող եք հաչալ, շարունակել հաչալ, որովհետև շունը հաչում է, քամին փչում. Ձեր իսկ ոճով Ձեզ պատասխանեմ: Ձեր խմբակցության այլ հարցերի պատասխանելու կարիք չունենք: (...) Ասում եմ՝ ականջներդ եք տեսնելու, իշխանություն չեք տեսնելու այս երկրում»:*** *Քաղաքապետը, արձագանքելով նաև դահլիճից հնչող մեկնաբանություններին, ավելացնում է՝* ***«Ղալաթ ա անում, գլուխը պատին ա տալիս, պատն էլ գլխին ա տալիս»,*** *ինչն, ըստ էության, նույնպես ուղղված է Մանուկ*

[2] Հրապարակման մեջ առկա է վրիպակ՝ շունը բառի փոխարեն նշված է շունչը

Սուքիասյանին: Ապա դիմելով ավագանու անդամներին Տիգրան Ավինյանը հավելում է՝ «Մի հատ լռեք սաղդ, հանգստացեք սաղդ (...) »»:

1.2 Տիգրան Ավինյանը 2023 թվականի հոկտեմբերի 10-ից զբաղեցնում է Երևանի քաղաքապետի պաշտոնը (Երևանի ավագանու N 1 արձանագրություն):

1.3 2024 թվականի հունիսի 7-ին թիվ 01/1845-2024 գրությամբ Որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Տիգրան Ավինյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ և դրան կցել փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նշված գրությունը Տիգրան Ավինյանը ստացել է 2024 թվականի հուլիսի 17-ին:

1.4 2024 թվականի հուլիսի 30-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3395-2024 գրությամբ Տիգրան Ավինյանի ներկայացուցիչը (լիազորագիր՝ տրված 29.07.2024թ.) (այսուհետ նաև՝ Ներկայացուցիչ) ներկայացրել է դիրքորոշում:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2024 թվականի հուլիսի 30-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3395-2024 գրությամբ վարույթում քննարկվող առերևույթ իրավախախտման առնչությամբ Տիգրան Ավինյանի ներկայացուցչի կողմից դիրքորոշում է (այսուհետ՝ Դիրքորոշում) ներկայացվել առ այն, որ.

Հանձնաժողովի կողմից կայացված վարույթի հարուցման որոշման հիմքում դրված հրապարակումը չի հիմնավորում Տիգրան Ավինյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտում թույլ տրված լինելու հանգամանքը, իսկ Որոշման մեջ Տիգրան Ավինյանի խոսքերից մեջբերված արտահայտություններն իրենց բովանդակությամբ, այդ թվում՝ հայոց լեզվում առկա, հասարակության տարբեր շերտերում լայն տարածում գտած ու փոխաբերական իմաստով օգտագործվող դարձվածքներով հանդերձ, չեն պարունակում վարքագծի կանոնների առերևույթ խախտում հիշեցնող տարրեր: Անդրադառնալով Որոշման իրավական հիմքերին և Հանձնաժողովի իրավասություններին, նպատակ ունենալով բացահայտել

համանման վարույթներ հարուցելու իրավական հիմքերը, ինչպես նաև դրա սուբյեկտներին՝ Ներկայացուցիչը նշում է, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավանորմի կիրառումը փոխկապակցված է նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված իրավանորմի հետ, որով օրենսդիրը նախատեսել է, որ եթե իրավախախտումն առնչվում է վարքագծի կանոնի այնպիսի խախտման, որով անմիջականորեն շոշափվում են կոնկրետ անձի իրավունքները, ապա այդ դեպքում Հանձնաժողովը վարույթ կարող է հարուցել բացառապես շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ այն դեպքում, երբ հարցն ունի հանրային մեծ հետաքրքրություն, կամ խախտումը կրում է համակարգային բնույթ: Քննարկվող պարագայում՝ Հանձնաժողովի Որոշման մեջ բացակայում է որևէ փաստարկ այն մասին՝ արդյո՞ք վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումը շոշափում է կոնկրետ անձի իրավունք, թե ոչ: Ներկայացուցիչը նշում է, որ առաջնորդվելով այն պարզ տրամաբանությամբ, որ Որոշման հիմքում դրված լրատվությունը հրապարակվել է ««Ձեր տեսակը, մաքսիմում ինչ կարող է անել, հաչալն է». Ավինյանը՝ Մանուկ Սուքիասյանին» վերտառությամբ՝ նա գտնում է, որ դրա համատեքստում Հանձնաժողովը պետք է հստակ մոտեցում արտահայտի այն իմաստով, թե արդյո՞ք առկա իրադրությունում և հրապարակված տեսագրության մեջ տեղ գտած քաղաքական երկխոսության և միմյանց մտքերին հակադարձելու ընթացքում Տիգրան Ավինյանի կողմից դրսևորած վարքագիծը շոշափել է կոնկրետ անձի, տվյալ դեպքում՝ հրապարակման վերնագրում նշված անձի իրավունքները, թե՝ ոչ:

Ներկայացուցիչը նշում է, որ եթե Հանձնաժողովը հավաստի է համարել հիշյալ հրապարակումն իր վերնագրով հանդերձ, ապա կարելի է ողջամիտ կասկած հայտնել Որոշման իրավաչափության կապակցությամբ, քանի որ ակնհայտ է, որ տվյալ դեպքում բացակայում է վարույթի հարուցման հիմք հանդիսացող՝ շահագրգիռ անձի դիմումը, ինչը Որոշմամբ հարուցված վարույթը կարճելու հիմք է հանդիսանում: Ինչ վերաբերում է կոնկրետ անձի իրավունք շոշափող՝ վարքագծի կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ վարույթ հարուցելու իրավասությանը, ապա օրենսդիրը նման

իրավասություն Հանձնաժողովին վերապահել է այն դեպքում, երբ հարցն ունի հանրային մեծ հետաքրքրություն, կամ խախտումը կրում է համակարգային բնույթ: Հատկանշական է, որ քննարկվող պարագայում հարցն ակնհայտորեն զուրկ է հանրային մեծ հետաքրքրությունից, ինչի մասին փաստում է այն, որ Որոշման հիմքում դրված է բացառապես «www.iravaban.net» լրատվական կայքում տեղ գտած հրապարակումը, իսկ Որոշումը կայացվել է 2024 թվականի ապրիլի 16-ին տեղի ունեցած Երևան քաղաքի ավագանու նիստից 48 օր հետո: Ինչ վերաբերում է խնդրի համակարգային բնույթին, ապա այն ևս բացառվում է, քանի որ ուսումնասիրությամբ պարզվել է, որ հարուցված վարույթը 2023 թվականի հոկտեմբերի 10-ից ի վեր Հանձնաժողովի կողմից հարուցված միակ վարույթն է: Միաժամանակ նշել է, որ եթե Հանձնաժողովն ենթադրաբար առաջնորդվել է այդ կարգավորմամբ, սակայն Որոշման մեջ հստակ կերպով չի պատճառաբանել իր այդ լիազորությունից ելնելով գործելու հանգամանքը, ապա ակնկալվում է, որ Հանձնաժողովը հիմնավորի խնդրի բնույթը համակարգային լինելու փաստարկը՝ ապահովելով վարույթի հարուցման իրավաչափությունը, դրանով իսկ՝ պահպանելով Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների, որոնց թվում՝ քաղաքական չեզոքության սկզբունքի տրամաբանությունը:

Վկայակոչելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը՝ Ներկայացուցիչը նշում է, որ Հանձնաժողովը պետք է պարզեր քննարկվող իրավահարաբերություններում (ավագանուն նիստին) Տիգրան Ավինյանն ի պաշտոնե ո՞վ է հանդես եկել, և արդյո՞ք այդ պաշտոնյան ներառված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով կանխորոշված պաշտոնատար անձանց շրջանակում, թե՞ ոչ: Մեջբերելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի դրույթները՝ Ներկայացուցիչը նշել է, որ Երևանի քաղաքապետը Երևանի ավագանու նիստը վարում է որպես Երևանի ավագանու անդամ և նիստը վարելիս հանդես չի գալիս որպես Երևանի քաղաքապետ, այլ հանդես է գալիս որպես տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող ավագանու անդամ, ինչից հետևում է, որ Երևանի ավագանու նիստը

վարող՝ Երևանի ավագանու անդամը չի համապատասխանում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 27-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված որևէ պաշտոնատար անձի կարգավիճակին, հետևաբար Ավագանու նիստերի ընթացքում Ավագանու անդամ Տիգրան Ավինյանը չի հանդիսանում այն սուբյեկտը, ում նկատմամբ նշված դրույթների կիրառմամբ կարող է վարույթ հարուցվել: Վերոնշյալից հետևում է, որ Հանձնաժողովն իրավասու չէ համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող՝ Երևանի ավագանու անդամի նկատմամբ հարուցել նշված վարույթը, հակառակ պարագայում՝ ելնելով Որոշման մեջ տեղ գտած տրամաբանությունից, համանման վարույթ պետք է հարուցվեր նաև Երևանի ավագանու մյուս անդամի կամ անդամների նկատմամբ, ինչի վերաբերյալ տեղեկատվություն կամ որևէ նշում Որոշման մեջ չի պարունակվում, մինչդեռ, վերջինիս կամ վերջիններիս կողմից հնչեցված արտահայտություններն իրենց բառամթերքով անհամեմատ գերազանցում են Տիգրան Ավինյանի կողմից հնչեցված և հայոց լեզվի բանավոր խոսքում լայնորեն տարածված դարձվածքներով համեմված արտահայտություններին:

Ներկայացուցիչը, մեջբերելով Երևանի ավագանու մեկ այլ անդամին ուղղված հետևյալ խոսքը. «Մի հատ էս աղբը մաքրեք, հա ստեղից: Հերիք եղավ, իսկականից: ԺՊ-ն քեզ ու պապայիդ տեղ տա: Էս ովա ա:» և հաջորդիվ հնչեցված արտահայտությունը՝ «Մի հատ ձեր հաճախորդին կարգի հրավիրեք:», նշել է, որ դրանք Հանձնաժողովի մոտ համապատասխան վարույթ հարուցելու հիմքեր չեն դիտվել այն պարզ պատճառով, որ նշված խոսքերի հեղինակ Մանուկ Սուքիասյանը հանդիսանում է Երևանի ավագանու անդամ, ով նշված հոդվածով սահմանված կարգավորման սուբյեկտ չի հանդիսանում: Երևանի ավագանու նիստը որպես Երևանի ավագանու անդամ վարելու համատեքստում Ներկայացուցիչը կարևորել է նաև Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 19-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) դրույթները, որոնցում Երևանի ավագանին՝ որպես նորմատիվ իրավական ակտեր ընդունող մարմին, կիրառել է «Նիստը վարող» եզրույթը, այլ ոչ թե «Երևանի քաղաքապետ» եզրույթը, քանի որ «Երևանի քաղաքապետ» եզրույթի կիրառումը կարող էր թյուրըմբռնման առիթ

հանդիսանալ այն իմաստով, որ նիստի վարող պաշտոնատար անձն ընկալվեր որպես տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող Երևանի քաղաքապետը, ով հանդես է գալիս որպես Երևանի գործադիր մարմնի ղեկավար, մինչդեռ, Երևանի ավագանին հանդիսանում է Երևանի օրենսդիր մարմինը, որի նիստը որևէ տրամաբանությամբ չի կարող վարվել գործադիր մարմնի դիրքից հանդես եկող՝ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական կարգավիճակում գործող պաշտոնատար անձի կողմից: Ասվածից հետևում է, որ Երևանի ավագանու նիստը վարելիս Տիգրան Ավինյանը հանդես է գալիս որպես Երևանի օրենսդիր մարմնի՝ Երևանի ավագանու անդամ, ում նկատմամբ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի դրույթները կիրառելի չեն, հետևաբար, Հանձնաժողովի Որոշումը կայացվել է նշված հոդվածի դրույթների սխալ կիրառման արդյունքում:

Ներկայացուցչի պնդմամբ՝ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Երևանի ավագանու նիստը Տիգրան Ավինյանի կողմից Երևանի ավագանու անդամի իրավական կարգավիճակով վարելու համոզմունք է առկա նաև Երևանի ավագանու անդամների մոտ, այդ թվում՝ Մանուկ Սուքիասյանի, քանի որ Որոշման կայացման հիմքում դրված «www.iravaban.net» լրատվական կայքում հրապարակված տեսանյութի 6:35-ից մինչև 6:37-ն ընկած հատվածում Մանուկ Սուքիասյանն արտահայտում է հետևյալ խոսքը. «Մի ավագանի Դուք եք, մի ավագանի մենք ենք», ինչից հետևում է, որ քաղաքական դիսկուրսը տեղի է ունեցել Երևանի ավագանու անդամների միջև, այլ ոչ թե քաղաքային գործադիր և օրենսդիր մարմինների անդամների կամ ներկայացուցիչների միջև:

Վկայակոչելով Կանոնակարգի 8-րդ, 79-րդ, 80-րդ, 82-րդ կետերով սահմանված դրույթները՝ Ներկայացուցիչը գտնում է, որ վարույթի շրջանակներում դրա առարկային առնչվող բոլոր փաստական հանգամանքները բազմակողմանի, օբյեկտիվ և ամբողջական ուսումնասիրության ենթարկելու օրենսդրական պահանջի անվերապահ կատարումը պահանջում է, որպեսզի Հանձնաժողովը Տիգրան Ավինյանի հնչեցրած արտահայտությունները գնահատի՝ ուսումնասիրելով Երևանի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի ողջ ընթացքը և չսահմանափակվի «www.iravaban.net» կայքում հրապարակված 8 րոպե 38

վայրկյան տևողությամբ տեսանյութի ուսումնասիրությամբ, այն էլ ընդհատումներով կատարված մեջբերումների գնահատմամբ, քանի որ միայն նշված ժամանակամիջոցում արձանագրված երկխոսության կամ արտահայտված մտքերի բովանդակությունը չի կարող բացահայտել Երևանի ավագանու անդամներ Տիգրան Ավինյանի և Մանուկ Սուքիասյանի միջև աշխատանքային հարաբերությունների բնույթը և չի կարող բացահայտել դրանցում Տիգրան Ավինյանի կողմից Մանուկ Սուքիասյանի հանդեպ բարեվարքության կամ հարգալիրության սկզբունքներից շեղվելուն և Հանձնաժողովի կողմից անհիմն կերպով Տիգրան Ավինյանին վերագրված վարքագծի կանոնների առերևույթ խախտում թույլ տրված լինելուն վերաբերող փաստարկներն օբյեկտիվ իրականությանը չհամապատասխանելու իրողությանը:

Միաժամանակ, Ներկայացուցիչն ընգծել է նաև, որ Երևանի ավագանու ապրիլի 16-ի նիստի տեսագրության ամբողջական դիտման (մասնավորապես՝ 5:15:10-րդ ժամանակամիջոցին հաջորդող րոպեների) արդյունքում Հանձնաժողովը կարող է գալ այն համոզման, որ Տիգրան Ավինյանն ու Մանուկ Սուքիասյանը աշխատանքային հանդարտ պայմաններում, հարց ու պատասխանի ձևաչափով շարունակում են իրականացնել իրենց քաղաքական գործունեությունը՝ Երևանի ավագանու նիստ վարող – Երևանի ավագանու անդամ հարաբերությունների համատեքստում՝ քննարկելով Երևան քաղաքին վերաբերող մեկ այլ հարց, ինչը փաստում է, որ Տիգրան Ավինյանի և Մանուկ Սուքիասյանի միջև նախորդիվ րոպեներին տեղի ունեցածը ավագանու նիստի բնականոն ընթացքի վրա որևէ հետևանք չի թողել: Ներկայացուցչի պնդմամբ՝ վերոնշյալի ապացույցն է հանդիսանում այն իրողությունը, որ Մանուկ Սուքիասյանը Հանձնաժողովին չի դիմել իր նկատմամբ անհարգալից վերաբերմունքի, իր պատվի և արժանապատվության վրա ներգործության կապակցությամբ:

Ինչ վերաբերում է Որոշման հիմք հանդիսացող հրապարակումից մեջբերված՝ Տիգրան Ավինյանի խոսքերին, ապա դրանք իրենցից ներկայացնում են Մանուկ Սուքիասյանի խոսքերին հակադարձում, և ինչպես նշել է Տիգրան Ավինյանը «Ձեր իսկ ոճով Ձեզ պատասխանեմ», պատասխանը համեմված է եղել հայոց լեզվում լայնորեն տարածում ունեցող, հասարակության տարբեր շերտերին ընկալելի,

ինչպես առօրյա խոսքում, այնպես էլ գործընկերական հարաբերություններում հաճախ օգտագործվող դարձվածքներով (ընդ որում՝ Մանուկ Սուքիասյանի խոսքում օգտագործվածը ևս իրենից ներկայացնում է շան հաչոցի փոխաբերական իմաստով հայկական դարձվածք), որոնք իրենց մեջ չեն պարունակում որևէ վիրավորական երանգ և դրանց օգտագործումը չի կարող գնահատվել որպես բարեվարքության և հարգալիրության սկզբունքի խախտում:

Մեջբերելով մի շարք բառեր և արտահայտություններ՝ (դարձվածքներ) մասնավորապես՝ «ղալաթ», «շունը կհաչի, քարավանը կքոչի», «հաչել», «ծոծրակը տեսնել», «գլուխը պատերին տալ», և ներկայացնելով դրանց լեզվաբանական բացատրությունները՝ Ներկայացուցիչը մեկնաբանում է, որ հայոց լեզվի հարուստ բանահյուսության տեսակ հանդիսացող խորիմաստ դարձվածքներն ու ասացվածքներն օգտագործելը խոսքը դարձնում է ավելի տպավորիչ, հետևաբար ընդունված է խոսքը համեմել իրավիճակին բնորոշ դարձվածքներով, ինչը թույլ է տալիս խոսքը հասանելի դարձնել լայն լսարանին և հասարակության տարբեր մասսաներին: Տվյալ պարագայում, Տիգրան Ավինյանի կողմից քննարկվող արտահայտությունները թեև փոքր-ինչ այլափոխված կերպով և համարժեք բառերով են օգտագործվել, սակայն չեն կորցրել իրենց դարձվածաբանական իմաստն ու նշանակությունը, ուստի, դրանցով համեմված խոսքը, ըստ Ներկայացուցչի, չի կարող դիտվել որպես բարեվարքության և հարգալիրության սկզբունքների, առավել ևս՝ որպես Երևանի ավագանու անդամ Տիգրան Ավինյանի կողմից վարքագծի կանոնների խախտում:

Ամփոփելով ողջ վերոնշյալը՝ Ներկայացուցիչը նշում է, որ Որոշմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 27-րդ հոդվածի դրույթները Երևանի ավագանու անդամ Տիգրան Ավինյանի նկատմամբ կիրառելի չլինելու, ինչպես նաև շահագրգիռ անձի դիմումի բացակայության հիմքով:

Ելնելով վերոգրյալից՝ Ներկայացուցիչը գտնում է, որ Հանձնաժողովը կարող է վարույթի կարճման նշված հիմքերի մասով այլ դիրքորոշում ունենալ, սակայն այդուհանդերձ, վարույթը ենթակա է կարճման՝ Տիգրան Ավինյանին վերագրված

վարքագծի կանոնների խախտման փաստը հիմնավորված և ապացուցված չլինելու հիմքով:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Տիգրան Ավինյանը Երևանի քաղաքապետ է ընտրվել Երևանի ավագանու՝ **2023 թվականի հոկտեմբերի 10**-ի նիստին և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

3.2 Հանձնաժողովը վարույթի շրջանակներում ուսումնասիրությամբ պարզել է, որ սույն թվականի ապրիլի 16-ին կայացած Երևանի ավագանու նիստի ընթացքում ծավալվել են քննարկումներ՝ կապված Երևանի ավագանու նիստերի օրակարգում ներառված հարցերի զեկուցման, հարցերը «զեկուցվող» կամ «չզեկուցվող» որակելու հետ, ինչպես նաև Երևանի կանաչապատման առնչությամբ վարվող քաղաքականության հետ:

3.3 Երևանի ավագանու «Մայր Հայաստանը խմբակցության անդամ Մանուկ Սուքիասյանը, անդրադառնալով այս հարցին, նշել է (1:20:30 րոպե). *«…մենք ինչ ենք տեսնում: Երևանի գործող իշխանությունն ուղղակի հավես չունի ավագանու նիստ անցկացնի, ասում ա երեք-չորս օր կտևի: Երևանի ավագանու բան ու գործի անունն ի՞նչ ա: Դե էդ էդ ա, մեծամասնություն տենց կցել, կցմցելով սարքել եք, է դուք հավաքվեք, էդ որոշումները կայացրեք, գնացեք, էլ ոչ էլ մեր ելույթներից ինչ-որ տենց նյարդային, զգայուն արձագանքներ տվեք: …»:*

3.4 Նիստի ընթացքում նշված թեմաներով վիճաբանությունը շարունակվել է, Երևանի ավագանու տարբեր անդամներ այլ հարցերի քննարկմանը զուգահեռ անդրադարձել են նաև այս թեմաներին, վիճաբանությունը ներառել է նաև Լեռնային Ղարաբաղին վերաբերելի հարցեր: Քննարկումներն անցկացվել են բորբոքված մթնոլորտում, Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը բազմիցս նկատողություններ է ներկայացրել Երևանի ավագանու անդամներին կամ շեշտել է օրակարգի առարկա հարցին վերաբերելի հարցադրումներ ներկայացնելու և ելույթներով հանդես գալու անհրաժեշտությունը:

3.5 Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Անի Խաչատրյանը նշել է (4:30:01 րոպե). *«Շնորհակալություն: Մի փոքր նախաբանով, հա: Ճիշտն ասած, չեմ ուզում նոր բառ ընտրել, այսօր արդեն շրջանառվող բառը մի*

տեսակ համահունչ է, հա: Մտածում էի անդրադառնալ «Բնակչության հատուկ սպասարկման» ՀՈԱԿ-ի, Կանաչապատման ՀՈԱԿ-ի, տրանսպորտի մասին վերջին օրերի բարբաջանքներին, բայց հիշեցի, որ տվյալ անձնավորությունը այսօր շատ ճիշտ մի արտահայտություն արեց, թե «գալիս ենք էստեղ ինչ անենք, հենա դուք քվեարկեք»: Այո, և ինչպես կասեր ձեր մտերիմ դասականը, եկել եք ստեղ, որ ի՞նչ անեք: Դե հա, եկել եք, որ իշխանափոխություն փորձեք անել, բայց իրականում 10 մարդ չեք կարողանում հավաքել: Ու Արցախից խոսելուց հիշեք կամ ձեր քաղաքական տիրոջը հարցրեք, կասի, որ Արցախի իշխանափոխության ժամանակ հիացած էիք բոլորով, որ Արցախը… առհասարակ Հայաստանը միութենականի կազմում եք տեսնում:»:

3.6 Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մանուկ Սուքիասյանը, արձագանքելով նշված խոսքերին, նշել է հետևյալը (5:05:44 րոպե). *«Ես հասկանում եմ, որ Մայր Հայաստանի ներկայությունը էս դահլիճում շատերի մոտ ա դիսկոմֆորտ առաջացրել, ու պիտի արձանագրենք, որ արի ու տես, որ էս իշխանությունն ա, էս ադմինիստրացիան ա, որ 2018 թվականից ի վեր գործող և նախկին իշխանությունների հետ փոխկապակցված անձանց առատության եղջյուրից տալիս ա շինթույլտվություններ, կոռ-ներ և այլն, և այլն: Մյուս առումով պիտի արձանագրեմ, որ հայտնի խոսք կա՝ շունը հաչում ա, քարավանը շարունակում ա իրա ճանապարհը և ամեն հաչացող շան վրա, որ քար նետենք, մենք կարող ա տեղ չհասնենք, բայց պիտի արձանագրենք, որ Մայր Հայաստանի… փեշերից, լավ, ուրիշ բան չասենք, փեշերից կախվելը հաց ու ջուր ա դառել շատերի համար, բայց էդ խոլերան մի օր մաքրվելու ա բոլոր կառավարական կաբինետներից: Հիմա անցնում եմ, երկու հարց ունեմ տալու… (դահլիճից արձագանք է լսվում, խոսքերը հստակ չեն) Լա՜վ:»:*

3.7 Մանուկ Սուքիասյանը շարունակել է իր խոսքը՝ ներկայացնելով իր հարցը՝ կապված «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր հաստիքի համալրման հետ: Նրա խոսքի ընթացքում նիստերի դահլիճից լսվում են այլ ձայներ, մասնավորապես, այն բանից հետո, երբ Մանուկ Սուքիասյանը կասկածի տակ է դնում նշված թափուր հաստիքի համալրման համար մրցույթ չանցկացնելու իրավաչափությունը՝ նշելով. *«Ինչու՞ մրցույթ չի անցկացվում:*

ենթադրում եմ, որպեսզի ԺՊ-ն իր աշխատանքային ստաժը հասցնի հասցնել պաշտոնի անձնագրով նախատեսված ստաժին»:

3.8 Նշվածին արձագանքելով՝ նիստերի դահլիճում հնչում է մեկ այլ անձի (ենթադրաբար՝ Երևանի ավագանու անդամ Անի Խաչատրյանի) խոսքը. *«Չէ, որ ԺՊ-ն քեզ տեղ տա:»:*

3.9 Նշված խոսքերին միաժամանակ արձագանքում են Երևանի ավագանու մի շարք անդամներ, իսկ Մանուկ Սուքիասյանն ասում է. *«Մի հատ էս աղբը մաքրեք հա ստեղից: Հերիք եղավ իսկականից: ԺՊ-ն քեզ ու պապայիդ տեղ տա: Էս ով ա: Մի հատ ձեր հաճախորդին կարգի հրավիրեք (դիմում է Տիգրան Ավինյանին):*

3.10 Երևանի քաղաքապետ, նիստը վարող Տիգրան Ավինյանը, արձագանքելով նիստերի դահլիճում տեղի ունեցող իրարանցմանը և Մանուկ Սուքիասյանի խոսքերին, նշում է. *«Մի հատ հլը լռություն: Մի հատ հլը լռություն: Լռություն, ասեցի: Ուրեմն կոռեկտության սահմանները, պարոն Սուքիասյան, կոռեկտության սահմանները... «խոլերան», «շունը», եթե խոսենք նախկին իշխանությունների մասին ու թե ում ենք կաբինետներից հանել ու դուրս շպրտել, ու ժողովուրդը, մենք չէ, դուք ձեր ականջները կտեսնեք, ապագայում իշխանություն չեք տեսնելու:* ***Ձեր տեսակը, ձեր տեսակը, պարոն Սուքիասյան, մաքսիմում ինչ կարող ա անել, հաչալն է, ու կարող եք հաչալ, շարունակել հաչալ, որովհետև «շունը հաչա, քամին փչի», Ձեր իսկ ոճով Ձեզ պատասխանեմ:*** *Այլ ձեր հարցերին, ձեր խմբակցության հարցերին պատասխանելու կարիք չունենք: Ցտեսություն:»:*

3.11 Նշված խոսքերին Մանուկ Սուքիասյանն արձագանքում է. *«Էդ վայրենի հաչոցները պահեք Ձեզ ու Ձեր ֆրակցիայի նիստին»*, ինչին ի պատասխան՝ Տիգրան Ավինյանը նշում է.

«Կոռեկտության սահմանները հենց կսովորեք, որտեղ են էդ սահմանները սկսվում և ավարտվում, այ որ լեզվին զոռ չտաք, միգուցե դահլիճից Ձեր խոսալու ժամանակ էդքան ելույթներ չհնչեն: Ի՞նչ «խոլերա», ի՞նչ «շուն»: Ինչ խոլերա, ինչ շուն: (դահլիճից արձագանքում են՝ *«Լավ ա անում»*) ***Ի՞նչ ա անում: Ղալաթ ա անում: Ղալաթ ա անում, ասեցի: Գլուխը պատին ա տալիս, պատն էլ գլխին ա տալիս:***

Այ քեզ բան, այ քեզ բան: Սա... Խուժան, խուժան էս բառապաշարը Ձեր, Դուք էլ եք ստիպում, նայեք, տեսեք, տեսեք, նայեք, հիմա նայեք, որերորդ անգամն ա,

պարոն Սուքիասյան, պարոն Սուքիասյան… լավ, լավ, լռեք, հանգստացեք սաղդ: Իրոք, ձեր չափերն ու սահմաններն անցել եք: Բոլորդ: Ու պարբերաբար, սենց երևի տենց անընդհատ պետք ա հիշացնել ձեր տեղն ու դերը: Որ հիշեք ձեր տեղն ու դերը: Որտեղից եք սերել, ուր եք եկել, ոնց եք էստեղ հասել, ովքեր են եղել, ում հետ եք փոխկապակցված եղել, ով է Ռոբերտ Քոչարյանը, ինչ ա արել էս երկրում տասնամյակներով, ինչ եք արել իշխանություն ունենալու ժամանակ: Ասում եմ, ականջներդ եք տեսնելու, իշխանություն չեք տեսնելու էս երկրում: Հակաժողովրդավարական ուժերն այս երկրում այլևս իշխանություն չեն լինելու: (…)

Ես ամեն ինչ շատ լավ եմ հիշում, պարոն Սուքիասյան, շատ լավ եմ հիշում: Ու ասեմ Ձեզ, ի տարբերություն ձեզանից շատերի, միշտ ամենակիզակետում եմ եղել, ինձ դասեր չտաք:

Լավ, թաղման բյուրո, խոսացեք, պատասխանեք, էս պարոն Սուքիասյանի հարցին… ***Եվ առանց, այլևս առանց լիրիկական զեղումների, հարց ունեք, հարցը կտաք: Արցախ, չգիտեմ, իշխանություն, շներ, էսա կասեմ էլի շները ու մնացած ծաղրածուները ուր կուղարկենք:»:***

IV. Վարքագծի կանոնների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքեր

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները դրսևորում են պաշտոնին վայել վարքագիծ: Նրանք բարեկիրթ վերաբերմունք են դրսևորում բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ շփվում են իրենց լիազորություններն իրականացնելիս: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները հարգում են իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվությունը (**բարեկրթության և հարգալիրության** սկզբունք):

4.2 Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), **համայնքների**

ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները **պարտավոր են պահպանել** սույն օրենքով սահմանված **վարքագծի սկզբունքները** և դրանցից բխող **վարքագծի կանոնները:**

4.4 Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), **համայնքների ղեկավարների**, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց **վարքագծի կանոնագրքի** (այսուհետ նաև՝ Վարքագծի կանոնագիրք) 1-ին կետի համաձայն՝ կանոնագիրքը հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների համախումբ է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:

4.5 Վարքագծի կանոնագրքի **բարեվարքության և հարգալիրության** սկզբունքի ներքո զետեղված 36-րդ կետը սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է **ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:**

4.6 Վարքագծի կանոնագրքի 37-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը **պարտավոր է հարգել** վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), **այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց**, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց **պատիվն ու արժանապատվությունը**:

4.7 Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ **պետական** և **համայնքային**, նույն հոդվածի 4-րդ մասի

համաձայն՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ **քաղաքական**, վարչական և հայեցողական:

4.8 Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **համայնքի ղեկավարի պաշտոնը համայնքային քաղաքական՝** նույն օրենքի իմաստով՝ **հանրային պաշտոն** է, հետևապես, վերջինիս նկատմամբ կիրառելի են Օրենքի 28-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները և Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերով սահմանված վարքագծի կանոնները:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

4.10 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից **վարքագծի կանոնների** խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

4.11 Նույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի կայքէջում, որտեղ պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

5.1 Վարչական վարույթի հարուցման հիմք հանդիսացած դեպքի քննության կապակցությամբ Հանձնաժողովի իրավասության առկայության մասին

Հանձնաժողովը նախ անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարույթի մասնակցի՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ հարուցված որոշման իրավաչափության կապակցությամբ ներկայացված դիրքորոշմանն առ այն, որ Երևանի քաղաքապետը Երևանի ավագանու նիստը վարում է որպես Երևանի ավագանու անդամ և նիստը վարելիս հանդես չի գալիս որպես Երևանի քաղաքապետ, այլ հանդես է գալիս որպես տեղական ինքնակառվարման մարմին հանդիսացող ավագանու անդամ, ուստիև՝ վերջինիս նկատմամբ չի կարող վարույթ հարուցվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի դրույթների կիրառմամբ:

Դիրքորոշմամբ նաև նշվել է, որ Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 19-ի N 1-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգով կիրառվել է ոչ թե «Երևանի քաղաքապետ», այլ «Նիստը վարող» եզրույթը, քանի որ «Երևանի քաղաքապետ» եզրույթի կիրառումը կարող էր թյուրըմբռնման առիթ հանդիսանալ այն իմաստով, որ նիստի վարող պաշտոնատար անձն ընկալվեր որպես տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող Երևանի քաղաքապետը, ով հանդես է գալիս որպես Երևանի գործադիր մարմնի ղեկավար, մինչդեռ Երևանի ավագանին հանդիսանում է Երևանի օրենսդիր մարմինը, որի նիստը որևէ տրամաբանությամբ չի կարող վարվել գործադիր մարմնի դիրքից հանդես եկող՝ տեղական ինքնակառավարման մարմնի իրավական կարգավիճակում գործող պաշտոնատար անձի կողմից:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ *Հանձնաժողովի գործառույթներն են (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),* ***համայնքների ղեկավարների,*** *(...) պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, (...) պահպանմանը հետևելը:*

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Հանձնաժողովը (...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),* ***համայնքների***

ղեկավարների, *(...) պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, (...) առկայության պարագայում* ***հարուցում է համապատասխան վարույթ:***

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ *պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի),* ***համայնքների ղեկավարների,*** *(...) պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:*

Ըստ այդմ, Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշմամբ հաստատվել է Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), **համայնքների ղեկավարների,** նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել սույն թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն:*

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ *Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են՝*

1) Երևանի ավագանին (այսուհետ՝ ավագանի).

2) Երևանի քաղաքապետը (այսուհետ՝ քաղաքապետ):

Նույն օրենքի 41-րդ հոդվածով կարգավորվում է Երևանի քաղաքապետի իրավական կարգավիճակը և սահմանվում է, որ *քաղաքապետը՝*

1) տեղական ինքնակառավարման մարմին է.

2) ներկայացնում է Երևանը՝ որպես համայնք, ավագանին և քաղաքապետարանը այլ անձանց և մարմինների հետ հարաբերություններում.

3) ղեկավարում է քաղաքապետարանի աշխատանքները.

4) ավագանու անդամ է.

5) օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի (Երևանի) ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր:

Նույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ավագանու նիստը հրավիրում և վարում է քաղաքապետը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ քաղաքապետի առաջին տեղակալը:*

Այսպիսով, Երևանի քաղաքապետը՝ որպես համայնքի ղեկավար, Սահմանադրությամբ նախատեսված տեղական ինքնակառավարման երկու մարմիններից մեկն է: Միաժամանակ, պայմանավորված նրանով, որ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն իրականացվում են համամասնական ընտրակարգով՝ Երևանի քաղաքապետը նաև ավագանու անդամ է:

Համայնքի ղեկավարը, ավագանու անդամ հանդիսանալով հանդերձ, ունի յուրահատուկ կարգավիճակ, որը ենթադրում է, որ նա ոչ միայն ունի ավագանու անդամի կարգավիճակից չբխող մի շարք գործառույթներ, այլ նաև այն, որ նրա նկատմամբ կիրառելի չեն ավագանու անդամներին առնչվող բոլոր իրավակարգավորումները: Այսպես, օրինակ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *ավագանու անդամն իրավունք ունի նախաձեռնելու ավագանու ակտերի ընդունումը (ներառյալ՝ բյուջեի),* ***բացառությամբ*** *այն դեպքերի, երբ սույն օրենքով այդ ակտերի* ***ընդունման նախաձեռնությունը վերապահված է բացառապես քաղաքապետին,*** *ավագանու խմբակցությանը կամ ավագանու անդամների առնվազն մեկ երրորդին:*

Այսպիսով, նշված դրույթով սահմանվում է ավագանու անդամների իրավունքը՝ նախաձեռնելու ավագանու ակտերի ընդունում, սակայն նաև նախատեսվում է նշված իրավունքից բացառություն այն դեպքերում, երբ կոնկրետ ակտի ընդունման նախաձեռնությունը վերապահված է բացառապես քաղաքապետին: Ուստի, նշված դրույթում հստակ տարանջատվում են

քաղաքապետի և ավագանու մյուս անդամների՝ ավագանու ակտի ընդունման նախաձեռնությամբ հանդես գալու լիազորությունները:

Անդրադառնալով Երևանի քաղաքապետի՝ ավագանու նիստերը վարելու իրավասությանը՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանվում է հենց «քաղաքապետի»՝ նիստը վարելու լիազորությունը՝ չմատնանշելով նրա՝ որպես ավագանու անդամի, կարգավիճակը:

Ընդ որում, Երևանի քաղաքապետի՝ Երևանի ավագանու նիստերը վարելու լիազորությունը բխում է նրա՝ որպես համայնքի ղեկավարի (և ոչ թե որպես ավագանու անդամի) կարգավիճակից:

Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 2-րդ գլխով կարգավորվում են ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանի ունեցող համայնքների ավագանիներին առնչվող իրավահահարաբերությունները: Նույն օրենքի՝ նշված գլխում ներառված 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը,*** *նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, իսկ սույն օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված դեպքում՝ համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամը. նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:*

Ըստ այդմ, կարող ենք նկատել, որ անգամ մեծամասնական ընտրակարգում ընտրվող ավագանի ունեցող համայնքներում, որտեղ համայնքի ղեկավարն ավագանու անդամ չէ, համայնքի ավագանու նիստերը հրավիրելու և վարելու լիազորությամբ, միևնույնն է, օժտված է համայնքի ղեկավարը:

Վերոգրյալից ելնելով՝ գտնում ենք, որ Երևանի քաղաքապետն ավագանու նիստերը վարելիս հանդես է գալիս որպես համայնքի ղեկավար և կրում օրենքով սահմանված՝ համայնքի ղեկավարին վերաբերելի իրավունքներն ու պարտականությունները:

Բացի այդ, հարկ է նկատել, որ Երևանի ավագանու նիստերին մասնակցելով՝ Երևանի քաղաքապետն իրականացնում է նաև գործադիր մարմնին բնորոշ լիազորություններ, ինչպես, օրինակ՝ հանձնարարություններ է տալիս Երևանի

քաղաքապետի տեղակալներին, քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներին և այլն: Ընդ որում, միջադեպը տեղի է ունեցել «Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևանի ավագանու անդամներին բանավոր հարցերին պատասխանների շրջանակներում: Այսպես, նշված հոդվածի համաձայն՝ *ավագանու նստաշրջանների ընթացքում ավագանու կանոնակարգով երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում* ***քաղաքապետը,*** *քաղաքապետի տեղակալները և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները պատասխանում են ավագանու անդամների բանավոր հարցերին:*

Ըստ այդմ, նիստի շրջանակներում Տիգրան Ավինյանն իրականացրել է ոչ միայն նիստը վարողի, այլ նաև քաղաքապետի՝ որպես տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի գործառույթները՝ պատասխանելով Երևանի ավագանու անդամների հարցերին:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Երևանի քաղաքապետը Երևանի ավագանու նիստերի շրջանակներում չի դադարում հանդես գալ որպես Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման գործադիր մարմին և հանդես չի գալիս պարզապես որպես Երևանի ավագանու անդամ:

Ինչ վերաբերում է Դիրքորոշմամբ նշված պնդմանն առ այն, որ Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 19-ի N 1-Ն որոշմամբ կիրառվում է «Նիստը վարող» և ոչ թե «Երևանի քաղաքապետ» եզրույթը, քանի որ հակառակ պարագայում կարող էր թյուրըմռնում առաջանալ առ այն, որ ավագանու նիստը վարում է տեղական ինքնակառավարման մարմին Երևանի քաղաքապետը՝ որպես գործադիր մարմնի ղեկավար, ապա հարկ է նկատել, որ նշված որոշմամբ «Նիստը վարող» տերմինի կիրառումը պայմանավորված է նրանով, որ մինչև Երևանի քաղաքապետի ընտրությունը կամ նրա բացակայության պայմաններում Երևանի ավագանու նիստերը վարելու իրավասությամբ օժտված են նաև այլ պաշտոնատար անձինք:

Այսպես, «Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *մինչև քաղաքապետի ընտրվելն ավագանու նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ավագանու նիստը հրավիրում և վարում է քաղաքապետը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ քաղաքապետի առաջին տեղակալը:*

Այսպիսով, բացի Երևանի քաղաքապետից, Երևանի ավագանու նիստերը վարելու իրավասությամբ օրենքում սահմանված դեպքերում օժտված են նաև՝

1) Երևանի ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը,
2) Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը:

Ըստ այդմ, վերոնշյալ որոշմամբ «նիստը վարող» և ոչ թե «Երևանի քաղաքապետ» տերմինի կիրառումն առավել նպատակահարմար և ճշգրիտ է իրավական տեխնիկայի տեսանկյունից, քանի որ հակառակ դեպքում անհրաժեշտ կլիներ յուրաքանչյուր դեպքում առանձին նշել նիստը վարելու իրավասություն ունեցող բոլոր սուբյեկտներին: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ «նիստը վարողը» եզրույթը կիրառվում է ինչպես ավագանու առաջին նիստին վերաբերելի կարագավորումներում (օրինակ՝ վերոնշյալ որոշմամբ հաստատված կանոնակարգի 65-րդ կետում), այնպես էլ հերթական նիստերին առնչվող կարգավորումներում (օրինակ՝ նույն կանոնակարգի 49-րդ կետում):

Միաժամանակ, անգամ այն պարագայում, եթե ենթադրենք, որ Երևանի քաղաքապետի՝ ավագանու նիստերը վարելու լիազորությունը բխում է վերջինիս՝ որպես ավագանու անդամի, կարգավիճակից, ապա հարկ է նկատել, որ «Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին» օրենքը չի տարանջատում Երևանի քաղաքապետի՝ որպես համայնքի ղեկավարի և որպես ավագանու անդամի լիազորությունները և բոլոր դեպքերում լիազորությունները սահմանելիս կիրառում է «Երևանի քաղաքապետը» եզրույթը՝ առանց կոնկրետ իրավական կարգավիճակի մատնանշման:

Ընդ որում, ինչպես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը և Օրենքը, այնպես էլ Վարքագծի կանոնագիրքը, սահմանելով վարքագծի կանոններն ու դրանց խախտումների համար պատասխանատվությանն առնչվող

ընթացակարգային և նյութաիրավական նորմերը, չեն նախատեսում համայնքի ղեկավարի հետ կապված որևէ բացառություններ, որոնք թույլ կտային ենթադրելու, որ վարքագծի կանոնները կիրառելի են միայն համայնքի ղեկավարի վարքագծի նկատմամբ այն լիազորություններն իրականացնելիս, որոնք չեն բխում նրա՝ որպես ավագանու անդամի, կարգավիճակից և հետևապես, պայմանավորված են բացառապես նրա՝ որպես համայնքի ղեկավարի, կարգավիճակով:

Ուստի, Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ նորմերի վերլուծությունից հնարավոր չէ եզրահանգել, որ Երևանի քաղաքապետը Երևանի ավագանու նիստերը վարելիս, Երևանի ավագանու անդամ լինելով հանդերձ, դադարում է հանդես գալ որպես համայնքի ղեկավար, և վերջինիս նկատմամբ կիրառելի են Վարքագծի կանոնագրքի դրույթները: Ըստ այդմ, Հանձնաժողովը գտնում է, որ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի՝ որպես Երևանի ավագանու նիստը վարողի, վարքագծի նկատմամբ կիրառելի են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումները:

5.2 Վարույթի հարուցման իրավաչափության մասին

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ վարույթ կարող է հարուցվել՝*

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա.

2) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.

3) Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *եթե խախտումն առնչվում է վարքագծի կանոնի այնպիսի խախտման, որով անմիջականորեն շոշափվում են կոնկրետ անձի իրավունքները, ապա այդ դեպքում Հանձնաժողովը վարույթ կարող է հարուցել բացառապես շահագրգիռ անձի դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ այն դեպքերում, երբ հարցն ունի հանրային մեծ հետաքրքրություն, կամ խախտումը կրում է համակարգային բնույթ:*

Քննարկվող դեպքում Տիգրան Ավինյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումը կատարվել է Երևանի ավագանու անդամ Մանուկ Սուքիասյանին ուղղված խոսքի միջոցով: Նկատի ունենալով, որ Տիգրան Ավինյանն իր խոսքում կիրառել է այնպիսի արտահայտություններ և խոսքի տոնայնությունն ու կատարված շեշտադրումներն եղել են այնպիսին, որ նրա խոսքն առերևույթ վիրավորական կարող է համարվել՝ թե բովանդակության և թե խոսքի ձևի տեսանկյունից՝ Հանձնաժողովը գտնում է, որ նշված դեպքում վարքագծի կանոնների առերևույթ խախտմամբ ուղղակիորեն շոշափվում են Մանուկ Սուքիասյանի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը և դրա բաղադրիչը հանդիսացող պատիվն ու արժանապատվությունը:

Ուստի, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ քննարկվող դեպքում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ սեփական նախաձեռնությամբ վարույթի հարուցման հիմքերի առկայությանը:

Այսպես, նշված հիմքերի թվում են այն դեպքերը, երբ հարցն ունի **հանրային մեծ հետաքրքրություն:**

Պարզելու համար, արդյոք սույն վարույթի հիմքում ընկած դեպքն առնչվում է հանրային մեծ հետաքրքրություն ունեցող հարցի, Հաձնաժողովն անհրաժեշտ է համարում բացահայտել «հանրային հետաքրքրություն» հասկացության բովանդակությունը:

Այս առնչությամբ հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը հանրային կամ հասարակական հետաքրքրությանն անդրադարձել է 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ: Մասնավորապես, նշված որոշմամբ, ի թիվս այլնի, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի (Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները) սահմանադրականությանը՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ *հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում* ***հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի*** *վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից:*

Նշված եզրահանգմանը Սահմանադրական դատարանը եկել է՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կայուն նախադեպային իրավունքը, մասնավորապես, օրինակ, Բլադետ Տրոմսոն և Ստենսաասը ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ) (Bladet Tromsø and Stensaas v. Norway [GC]) գործով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները: Նշված գործով Եվրոպական դատարանի կայացրած վճռի անգլերեն տեքստի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «հանրային հետաքրքրություն» հայերեն եզրույթն անգլերեն «public interest» եզրույթի թարգմանությունն է, որը կարող է թարգմանվել նաև որպես «հանրային շահ»:

Սահմանադրական դատարանը նույն որոշման շրջանակներում «հանրային հետաքրքրություն» արտահայտությունն է կիրառել նաև Եվրոպական դատարանի կողմից օգտագործվող՝ «public concern» եզրույթի առնչությամբ, իսկ «issues of general interest» եզրույթը թարգմանվել է որպես «ընդհանուր հետաքրքրության խնդիրներ»:

Ըստ այդմ, բացահայտելու համար «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասում կիրառվող՝ «հանրային մեծ հետաքրքրություն ունեցող հարցեր» եզրույթի նշանակությունը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում «public interest», «public concern» և «issues of general interest» եզրույթների կիրառմանն ու դրանց մեկնաբանությանը:

Հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանի կողմից նշված եզրույթները շատ դեպքերում կիրառվում են որպես համարժեք և փոխադարձ փոխարինելի (interchangeable) եզրույթներ:

Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի գործով վճռով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ որոշելը, թե ինչն է կազմում ընդհանուր հետաքրքրության (general interest) առարկա, կախված կլինի կոնկրետ գործի հանգամանքներից:[3]

[3] Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (ՄՊ) (Von Hannover v. Germany (No. 2) [GC]) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռ, դիմումներ nos. 40660/08, 60641/08, § 109

Որոշելիս՝ արդյոք հրապարակումն առնչվում է հանրային հետաքրքրությանը /հանրային շահին (public interest), Եվրոպական դատարանը հաշվի է առել հրապարակմամբ ներկայացվող հարցերի կարևորությունը հասարակության համար, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվության բնույթը:[4]

Հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանը հստակ տարանջատել է հանրային հետաքրքրությանն (public interest) առնչվող հարցերը հանրային հետաքրքրասիրություն (public curiosity) ներկայացնող կամ այն բավարարելուն ուղղված հարցերից: Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ հանրային շահին առնչվող երկխոսությանը նպաստող չեն կարող համարվել այնպիսի հոդվածները, որոնք ուղղված են բացառապես որոշակի լսարանի հետաքրքրասիրության բավարարմանը՝ կապված, օրինակ, հանրային դերակատարի անձնական կյանքի հետ:[5]

Ընդ որում, Եվրոպական դատարանը նշել է, որ հանրային հետաքրքրությունը կամ շահը սովորաբար առնչվում է այնպիսի հարցերի, որոնք **այն աստիճանի ազդեցություն են ունենում հասարակության վրա, որ այն կարող է լեգիտիմ կերպով հետաքրքրվել այդ հարցերով,** կամ որոնք գրավում են հասարակության ուշադրությունը կամ զգալի կերպով մտահոգում են հասարակությանը, հատկապես, երբ դրանք ազդում են քաղաքացիների բարօրության կամ համայնքի կյանքի վրա: Եվրոպական դատարանը շեշտել է, որ սա վերաբերում է նաև այն հարցերին, որոնք կարող են առիթ տալ մեծ վեճերի կամ որոնք առնչվում են կարևոր սոցիալական խնդիրների կամ որոնք ներառում են այնպիսի խնդիրներ, որոնց մասին հանրությունը հետաքրքրված կլինի տեղեկանալ: Հանրային հետաքրքրությունը չի կարող հավասարեցվել այլոց անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվության

---

[4] Սատակուննան Մարկկինապորսսի Օյը և Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի (ՄՊ) (Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland [GC]) գործով 2017 թվականի հունիսի 27-ի վճիռ, դիմում no. 27/06/2017, § 168

[5] Տես, օրինակ, Սատակուննան Մարկկինապորսսի Օյը և Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի (ՄՊ) (Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland [GC]) գործով 2017 թվականի հունիսի 27-ի վճիռը, դիմում no. 27/06/2017, § 169, Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2004 թվականի հունիսի 24-ի վճիռը, դիմում no. 59320/00, §§ 65, 76, Շտանդարտ Ֆերլագս GmbH-ն ընդդեմ Ավստրայի (Standard Verlags GmbH v. Austria (No. 2)) գործով 2009 թվականի հունիսի 4-ի վճիռը, դիմում no. 21277/05, §§ 51-52

հետ կապված հետաքրքրասիրությանը կամ սենսացիոնիզմի կամ վոյերիզմի ուղղված՝ լսարանի ցանկությանը:[6]

Այսպես, օրինակ, Տամմերն ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ անձն, ում առնչվել է հրապարակումը, այլևս չի հանդիսացել հանրային պաշտոնյա, ուստի, նրա անձնական կյանքին առնչվող հարցերն այլևս չէին կարող ազդեցություն ունենալ հասարակության վրա:[7]

Մի շարք դեպքերում խնդիրն որպես «հանրային հետաքրքրություն» ներկայացնող դիտարկելիս Եվրոպական դատարանը հիմնվել է այն հանգամանքի վրա, որ տվյալ հարցի շուրջ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) անդամ պետությունում ծավալվել են լայն հանրային քննարկումներ: Որպես դրա ապացույցներ դիտարկվել են խնդրի վերաբերյալ լրատվամիջոցների բազմաթիվ անդրադարձները (excessive media coverage)[8], հետազոտական աշխատանքները, գրականությունում և այլ գեղարվեստական ստեղծագործություններում անդրադարձը, **քաղաքական դաշտում (այդ թվում՝ խորհրդարանում)** կամ ավելի լայն հասարակության կողմից **հարցի շուրջ քննարկումների վարումը**[9], դատական գործերի առկայությունը և այլն:[10]

---

[6] Սատակուննան Մարկկինապորսսի Օյը և Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի (ՄՊ) (Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland [GC]) գործով 2017 թվականի հունիսի 27-ի վճիռ, դիմում no. 27/06/2017, § 171

[7] Տամմերն ընդդեմ Էստոնիայի (Tammer v. Estonia) գործով 2001 թվականի փետրվարի 6-ի վճիռ, դիմում no. 41205/98, § 68

[8] Տես, օրինակ, Էգելանդն ու Հանսեյդն ընդդեմ Նորվեգիայի (Egeland and Hanseid v. Norway) գործով 2009 թվականի ապրիլի 16-ի վճիռը, դիմում no. 34438/04, § 58, Նիկովիտցը և Ֆերլագսգրուփփե Նյուզ GmbH-ն ընդդեմ Ավտրիայի (Nikowitz and Verlagsgruppe News GmbH v. Austria) գործով 2007 թվականի փետրվարի 22-ի վճիռը, դիմում no. 5266/03, § 25, Կոլակո Մեստրե և Սին ընդդեմ Պորտուգալիայի (Colaco Mestre et Sci - Sociedade Independente de Comunicacao, S.A. c. Portugal) գործով 2007 թվականի ապրիլի 26-ի վճիռը, դիմումներ nos. 11182/03, 11319/03, §§ 27, 30

[9] Տես, օրինակ, Մոննատն ընդդեմ Շվեյցարիայի (Monnat v. Switzerland) գործով 2006 թվականի սեպտեմբերի 21-ի վճիռը, դիմում no. 73604/01, § 58

[10] Տես, օրինակ, Նիլսենը և Ջոհնսենն ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ) (Nilsen and Johnsen v. Norway [GC]) գործով 1999 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, դիմում no. 23118/93, § 46, Բլադետ Տրոմսոն և Ստենսասն ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ) (Bladet Tromsø and Stensaas v. Norway [GC]) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, դիմում no. 21980/93, §§ 29-30, 62, 73, Էդիտիոնս Պլոնն ընդդեմ Ֆրանսիայի (Éditions Plon v. France) գործով 2004 թվականի մայիսի 18-ի վճիռը, դիմում no. 58148/00, § 44, Շվայցերիշե Ռադիո և Ֆերնզեհգեզելլշաֆթ SRG-ն ընդդեմ Շվեյցարիայի (Schweizerische Radio- und Fernsehgesellschaft SRG v. Switzerland) գործով 2012 թվականի հունիսի 21-ի վճիռը, դիմում no. 34124/06, §§ 56, 65

Միաժամանակ, այլ դեպքերում Եվրոպական դատարանն արձանագրել է հանրային հետաքրքրության կամ շահի առկայությունը՝ նաև ելնելով խնդրի բնույթից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք խնդրի շուրջ ծավալվել են հանրային քննարկումներ կամ այն այլ կերպ գտնվել է հանրության ուշադրության կենտրոնում: Այսպես օրինակ, մի շարք դեպքերում հանրային հետաքրքրության առկայությունն արձանագրվել է, երբ խնդիրը վերաբերել է քաղաքական հարցերի կամ հանցանքների[11]:

Նյուզ Վերլագս GmbH & Co. KG-ն ընդդեմ Ավստրիայի գործով հանրային հետաքրքրության առկայությունը գնահատելիս Եվրոպական դատարանը կարևորել է, որ հանցանքները, որոնցում դիմողը մեղադրվել է, քաղաքական բնույթի են եղել և ուղղված են եղել ժողովրդավարական հասարակության հիմքերի դեմ:[12] Մեկ այլ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն, թե ինչպես են դատավորներն իրականացնում իրենց լիազորությունները, հանրության ընդհանուր հետաքրքրությանն առնչվող հարց է (subject of general interest)՝ նկատի ունենալով դատավորների՝ որպես արդարադատության երաշխավորների, առանձնահատուկ դերը հասարակությունում:[13]

Եվրոպական դատարանը, նմանապես, հասարակության համար խնդրի կարևորությունը և դրա հնարավոր ազդեցությունը հաշվի առնելով, հանրային հետաքրքրություն ներկայացնող է համարել քաղաքական տեսանկյունից նվազ նշանակություն ունեցող հարցերը, ինչպես, օրինակ, հանրային պաշտպանների

---

[11] Տես, օրինակ, Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (ՄՊ) (Von Hannover v. Germany (No. 2) [GC]) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, դիմումներ nos. 40660/08, 60641/08, § 109, Կրոնե Ֆերլագ GmbH & Co. KG-Ն ընդդեմ Ավստրիայի (Krone Verlag GmbH & Co. KG v. Austria) գործով 2002 թվականի փետրվարի 26-ի վճիռ, դիմում no. 34315/96, § 36, Կաստելլսն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 45: Տես նաև Վայթն ընդդեմ Շվեդիայի (White v. Sweden) գործով 2006 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը (դիմում no. 42435/02, § 29), որով թեև առկա են եղել նաև քննարկումներ վարչապետի սպանության դեպքի վերաբերյալ, սակայն Եվրոպական դատարանը չի անդրադարձել այդ հարցին՝ պարզապես նշելով, որ ինքնին վարչապետի սպանությունն անվիճելիորեն հանրային հետաքրքրության և մտահոգության (public interest and concern) առարկա է: Եվրոպական դատարանի մոտեցումը նշված դեպքում ցույց է տալիս, որ դատարանն առաջնային է դիտարկել խնդրի բնույթը՝ անկախ դրա շուրջ քննարկումների տարածվածությունից:

[12] Նյուզ Վերլագս GmbH & Co. KG-ն ընդդեմ Ավստրիայի (News Verlags GmbH & Co. KG v. Austria) գործով 200 թվականի հունվարի 11-ի վճիռ, դիմում no. 31457/96, § 54

[13] Լեեմոպելն ու Ս.Ա. Էդ. Սին Ռեվյուն ընդդեմ Բելգիայի (Leempoel and S.A. Ed. Cine Revue c. Belgique) գործով 2006 թվականի նոյեմբերի 9-ի վճիռ, դիմում no. 64772/01, § 74

նշանակման համակարգի[14], էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման[15] հետ կապված խնդիրները, պատգամավորի կողմից թմրամիջոցների հետ կապված հանցանքներին վերաբերելի կարգավորումների սահմանադրականության վերաբերյալ դիմում ներկայացնելը[16], հողերի՝ գյուղատնտեսական և անտառային նպատակներով օգտագործման համար պահպանումը[17], ճանապարհների երթուղու և բնապահպանական վիճակի վրա դրա ազդեցության վերաբերյալ հարցերը[18] և այլն:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ հանրային հետաքրքրությունը չի կարող գնահատվել՝ միայն հիմք ընդունելով այն, թե որքանով է իրադարձությունն արժանացել հանրության ուշադրությանը, տեղիք տվել լայն քննարկումների կամ այլ կերպ հավասարեցվել հարցի հանրային հնչեղությանը: Անշուշտ, այս հանգամանքներն ինքնին ևս կարող են բավարար լինել համարելու համար, որ հարցը հանրային հետաքրքրության առարկա է, միաժամանակ, այն դեպքում, երբ իրադարձությունը կամ խնդիրն առնչվում է այնպիսի հարցի, որը էական նշանակություն կարող է ունենալ հասարակության համար կամ էական ազդեցություն ունենալ հանրային կյանքին առնչվող հարաբերությունների նկատմամբ, այն ևս կհամարվի «հանրային հետաքրքրություն ներկայացնող»՝ անկախ նշված իրադարձության կամ խնդրի շուրջ ծավալված քննարկումների առկայությունից կամ դրանց լայնամասշտաբ լինելու հանգամանքից:

Ըստ այդմ, որոշելու համար՝ արդյոք խնդիրը հանրային հետաքրքրություն է ներկայացնում, հարկ է իրականացնել գործի հանգամանքների գնահատում՝ յուրաքանչյոր դեպքով՝ պատասխանելով հետևյալ հարցերին՝

---

[14] Տես Մագյար Հելսինկի Բիզոտտսագն ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Magyar Helsinki Bizottság v. Hungary[GC]) գործով 2016 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, դիմում no. 18030/11, §§ 95, 171-172, 180

[15] Տես Յութ Ինիշիաթիվ ֆոր Հյումըն Ռայթսն ընդդեմ Սերգիայի (Youth Initiative for Human Rights v. Serbia) գործով 2013 թվականի հունիսի 25-ի վճիռը, դիմում no. 48135/06, § 24

[16] Տես Տարսասագ ա Սզաբադսագյոգոկերտն ընդդեմ Հունգարիայի (Társaság a Szabadságjogokért v. Hungary) գործով 2009 թվականի ապրիլի 14-ի վճիռը, դիմում no. 37374/05, § 28

[17] Տես Օսթերայշիշե Ֆերայնիգունգ ցուր Էրհալթունգ, Շթերքունգ ունդ Շաֆֆունգն ընդդեմ Ավստրիայի (Österreichische Vereinigung zur Erhaltung, Stärkung und Schaffung v. Austria) գործով 2013 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, դիմում no. 39534/07, §§ 35-36

[18] Տես Ալմիդա Ազեվեդոն ընդդեմ Պորտուգալիայի (Almeida Azevedo v. Portugal) գործով 2007 թվականի հունվարի 1-ի վճիռը, դիմում no. 43924/02, § 28

1) արդյոք խնդիրն առնչում է այնպիսի հարցի, որը կարող է ազդեցություն ունենալ հասարակության, հասարակական կյանքի, այդ թվում՝ հանրային բարօրության վրա,

2) արդյոք խնդիրն առնչվում է այնպիսի հարցերի, որոնք զգալի կերպով մտահոգում են հասարակությանը կամ գրավում են հասարակության ուշադրությունը և ուղղակի կապ կամ որոշակի ազդեցություն ունեն հասարակական կյանքի նկատմամբ, այլ ոչ թե առնչվում են միայն մասնավոր կյանքին վերաբերելի հարցերի:

Նշված երկու հանգամանքներից մեկի առկայության պարագայում հնարավոր կլինի արձանագրել, որ հարցը ներկայացնում է հանրային հետաքրքրություն:

Ընդ որում, գնահատելու համար՝ արդյոք խնդիրը զգալի կերպով մտահոգում է հասարակությանը կամ գրավում դրա ուշադրությունը, պետք է հիմք ընդունվեն լրատվամիջոցների կամ հանրային դերակատարների կողմից նշված հարցին անդրադարձը, հանրության կողմից ցանկացած հարթակներում (այդ թվում՝ խորհրդարանում կամ դրա հետ համեմատելի հարթակներում) խնդրի լայն քննարկումը, պետական մարմինների կողմից խնդրին անդրադարձը և այլն:

Միաժամանակ, կարևոր է, որ Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է Հանձնաժողովի լիազորությունը՝ սեփական նախաձեռնությամբ հարուցելու վարույթ այն դեպքում, եթե հարցն ունի հանրային **մեծ** հետաքրքրություն: Ըստ այդմ, սեփական նախաձեռնությամբ վարույթի հարուցման համար բավարար չի լինի արձանագրել, որ վարույթի առարկա հարցն ունի հանրային հետաքրքրություն, այլ պետք է հաստատվի հանրային **մեծ** հետաքրքրության առկայության հանգամանքը:

Հանձնաժողովը գտնում է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերը չեն կարող Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով մեծ հետաքրքրություն ներկայացնող համարվել Վարքագծի կանոնագրքով սահմանված ցանկացած վարքագծի կանոնի խախտման դեպքում, այլ միայն այն դեպքերում, երբ առկա է ենթադրյալ խախտման հատկապես ծանր դրսևորում, կամ երբ ենթադրյալ խախտումն արժանացել է հանրության մեծ ուշադրությանը կամ եթե վարույթն առնչվում է ժողովրդավարական հասարակությունում անկյունաքարային

նշանակություն ունեցող հարցի: Վարքագծի կանոնի խախտման՝ «ծանր դրսևորում» լինելը կարող է գնահատվել ինչպես արարքի բնույթով, այնպես էլ այլ անձանց իրավունքների կամ հանրային իշխանության հեղինակության վրա արարքի հնարավոր հետևանքների ծանրությամբ:

Վերոգրյալից ելնելով և անդրադառնալով սույն վարույթի հանգամանքներին՝ հարկ է նկատել, որ նշված դեպքում ենթադրյալ խախտումը կատարվել է Երևանի ավագանու նիստին տեղի ունեցած երկխոսության շրջանակներում: Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ ժողովրդավարությունում խորհրդարանը կամ դրա հետ համատեղելի այլ մարմինները քաղաքական երկխոսության առանցքային հարթակ են[19]: Ըստ այդմ, կարող ենք արձանագրել, որ ավագանին, որպես ուղղակի մանդատով օժտված օրենսդիր մարմին, ժողովրդավարական հասարակությունում իր կարևորությամբ համեմատելի է խորհրդարանի հետ և ավագանու նիստերին տեղի ունեցող երկխոսությունն ու բանավեճը որպես կանոն առնչվում են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի:

Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ «Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվել է Երևանի ավագանու նիստերի պարտադիր առցանց հեռարձակման պահանջ: Հանձնաժողովը փաստում է, որ տվյալ հեռարձակման պահանջի նախատեսումն ուղղված է համայնքային օրենսդիր մարմնի գործունեության թափանցիկության երաշխավորմանը և այդպիսով հանրության՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկացված լինելու իրավունքի ապահովմանը: Ուստի, Հանձնաժողովը գտնում է, որ օրենսդրական մակարդակում Երևանի ավագանու նիստերը հեռարձակելու պահանջը վկայում է նշված հարթակում քննարկվող հարցերի հանրային նշանակության մասին, քանի որ օրենսդիրը ձգտել է բացառել այնպիսի դեպքերը, երբ հանրությունը զրկված կլինի պատշաճ կերպով նիստի ընթացքին հետևելու և նիստի ընթացքում քննարկվող հարցերի մասին տեղեկանալու հնարավորությունից:

---

[19] Տես, օրինակ, Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria) գործով 2001 թվականի փետրվարի 27-ի վճիռը, դիմում no. 26958/95, § 36

Քննարկվող դեպքում Տիգրան Ավինյանը վարույթի շրջանակներում դիտարկվող իր խոսքում անդրադարձել է Երևանի ավագանու նիստին «կոռեկտության սահմանների» պահպանմանը՝ այդպիսով քննարկելով էթիկայի կանոնների պահպանման կարևորությունը, բացի այդ, նա նաև անդրադարձ է կատարել քաղաքական հարթակում ընդդիմության դերակատարմանը և իշխանությունների հետ փոխհարաբերակցությանը: Ավելին, քննարկվող միջադեպը և դրան հանգեցրած, մինչ այդ տեղի ունեցած երկխոսությունը ծավալվել են գլխավորապես մի քանի թեմայի շուրջ՝ Երևանի ավագանու նիստերի օրակարգում ներառված հարցերը որպես «զեկուցվող» և «չզեկուցվող» դիտարկելու, Երևանի կանաչապատման առնչությամբ վարվող քաղաքականության, Երևանի ավագանու աշխատանքներում ընդդիմության դերակատարման և Լեռնային Ղարաբաղի հետ կապված ՀՀ քաղաքականության:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոնշյալ բոլոր թեմաներն էական նշանակություն ունեն հանրության համար, որոշակի կերպով ազդեցություն ունեն հասարակական կյանքի այս կամ այն ոլորտի նկատմամբ, ուստիև՝ ներկայացնում են հանրային հետաքրքրություն:

Բացի այդ, խորհրդարանի հետ համեմատելի հարթակում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների պահպանումն ինքնին մեծ կարևորություն ունի ժողովրդավարական հասարակությունում:

Այսպես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության խորհուրդը 2017 թվականի հունվարի 26-ի թիվ OECD/LEGAL/0435 հանձնարարականում նշել է, որ բարեվարքությունը քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերի կարևորագույն հիմնասյուներից է և ուստի, առանցքային է անհատների և հասարակությունների տնտեսական և սոցիալական բարեկեցության և բարգավաճման տեսանկյունից: Նույն հանձնարարականով նշվել է, որ բարեվարքությունը կենսական նշանակություն ունի հանրային կառավարման համար՝ երաշխավորելով հանրային շահը և վերահաստատելով այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսին է իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի վրա հիմնված բազմակարծ ժողովրդավարության հանձնառությունը: Նմանապես, Եվրոպայի

խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 247 (2003) կարծիքում նշվել է, որ հանրային էթիկան ժողովրդավարության շատ կարևոր քաղաքական ասպեկտն է[20]:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ հաշվի առնելով բարեվարքության և դրա բաղադրատարրը կազմող վարքագծի կանոնների կարևորությունը հանրային կառավարման, ժողովրդավար հասարակության և քաղաքական առողջ երկխոսության պահպանման տեսանկյունից՝ ավագանու նիստին վարքագծի կանոնների պահպանումն ինքնին հանրային հետաքրքրություն ներկայացնող հարց է:

Հանձնաժողովն ընդգծում է, որ չի կարող ընդունելի համարվել Դիրքորոշմամբ ներկայացված մեկնաբանությունն առ այն, որ *քննարկվող պարագայում հարցն ակնհայտորեն զուրկ է հանրային մեծ հետաքրքրությունից, ինչի մասին փաստում է այն, որ Որոշման հիմքում դրված է բացառապես «www.iravaban.net» լրատվական կայքում տեղ գտած հրապարակումը, իսկ Որոշումը կայացվել է 2024 թվականի ապրիլի 16-ին տեղի ունեցած Երևան քաղաքի ավագանու նիստից 48 օր հետո:* Եթե անգամ ընդունելի համարենք դիտարկումն առ այն, որ որոշման հիմքում դրվել է միայն 1 լրատվամիջոցի հրապարակում, առանցքային է, որ ինչպես արդեն նշվեց՝ հարցը որպես հանրային հետաքրքրություն ներկայացնող որակելու համար անհրաժեշտ նախապայման չէ լրատվամիջոցների կողմից դրան լայն արձագանքը, և առաջնային են խնդրի բնույթը ու հասարակական կյանքում դրա հնարավոր ազդեցության կամ ժողովրդավարական հասարակությունում դրա կարևորության աստիճանը:

Այնուամենայնիվ, անդրադառնալով վարույթի առարկա իրադարձությանը լրատվամիջոցների արձագանքին՝ հարկ է նկատել, որ վարույթի շրջանակներում քննարկվող դեպքն արժանացել է հասարակության ուշադրությանը:

Այսպես, թեև Հանձնաժողովի՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին 2024 թվականի հունիսի 4-ի թիվ 0/2024/Վ/Վ որոշմամբ վկայակոչվել է միայն «iravaban.net» լրատվական կայքի «Ձեր տեսակը, մաքսիմում ինչ կարող է անել, հաչալն է». Ավինյանը՝ Մանուկ

[20] Հասանելի՝ https://pace.coe.int/en/files/17159/html

Սուքիասյանին» վերտառությամբ հրապարակումը, սակայն դեպքի առթիվ կատարվել են նաև բազմաթիվ այլ հրապարակումներ: Մասնավորապես, վարույթի շրջանակներում քննարկման ենթակա միջադեպին անդրադարձել են նաև «oragir.news», «news.am», «Այսօր՝», «Հայկական ժամանակ», «Ժողովուրդ», «factor.am» լրատվականները: Ցուցադրվող տեսանյութը հրապարկվել է նաև «ArmLurTV» (12.000 դիտում՝ 09.08.2024թ. դրությամբ), «NEWS AM» (5.000 դիտում՝ 09.08.2024թ. դրությամբ), «Factor TV» (18.880 դիտում՝ 09.08.2024թ. դրությամբ) լրատվամիջոցների յութուբյան ալիքներում, բացի այդ, դրան անդրադարձ է կատարվել նաև «ArmComedy» յութուբյան ալիքի «ArmComedy 1188 - Բեսպրեդել VS վիրավորանք» հաղորդման շրջանակներում (113.886 դիտում՝ 09.08.2024թ. դրությամբ):

Դեպքին նման անդրադարձը վկայում է այն մասին, որ լրատվամիջոցների կողմից այն դիտարկվել է որպես հանրության ուշադրությանն արժանի, որոշակի կարևորություն կամ նշանակալիություն ներկայացնող իրադարձություն, իսկ տեսանյութերի դիտումները փաստում են, որ հանրության որոշակի հատվածն իսկապես հետաքրքրված է եղել նշված միջադեպով:

Վերոգրյալի լույսի ներքո Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի առարկա հանդիսացող առերևույթ խախտումը վերաբերում է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի, այն է՝ ընտրված մարմնի՝ Երևանի ավագանու նիստին քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքական բանավեճի շրջականերում վարքագծի կանոնների պահպանմանը: Ավելին, հաշվի առնելով նաև ժողովրդավարական հասարակությունում ավագանու նման հարթակներում քաղաքական բանավեճի կարևորությունը, նկատի ունենալով, որ խնդրո առարկա վարքագիծը դրսևորվել է հանրային նշանակություն ունեցող մի շարք հարցերի քննարկման համատեքստում, ինչպես նաև այն, որ միջադեպը արժանացել է լրատվամիջոցների ուշադրությանը և լայն անդրադարձին՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն դեպքում վարույթի առարկա առերևույթ խախտումը ներկայացնում է հանրային մեծ հետաքրքրություն: Ուստի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով առաջնորդվելով՝ Հանձնաժողովն իրավասու էր հարուցել վարույթ:

5.3 Արարքի գնահատումը և կարծիքի արտահայտման ազատության իրավունքի միջամտության իրավաչափությունը

Սույն վարույթի շրջանակներում քննարկման ենթակա՝ Տիգրան Ավինյանի վարքագիծը դրսևորվել է Երևանի ավագանու նիստի ընթացքում և հաջորդել է Երևանի ավագանու անդամների միջև վիճաբանությանը: Նկատի ունենալով, որ վարույթի շրջանակներում քննարկվում է Տիգրան Ավինյանի հնչեցրած խոսքի իրավաչափության հարցը՝ անհրաժեշտ է անդրադառնալ նշված դեպքում կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմաններին:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: (...)

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության,

տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:»:

Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ արտահայտման ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից և դրա զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է: Արտահայտման ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարենպաստ կերպով են ընդունվում կամ դիտարկվում են որպես ոչ վիրավորական կամ արժանանում են անտարբերության, այլ նաև այնպիսի «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք վիրավորում, ապշեցնում կամ անհանգստացնում են: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չի կարող լինել «ժողովրդավարական հասարակություն»:

Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթակա է բացառությունների, որոնք, սակայն, պետք է խիստ կերպով մեկնաբանվեն և նման սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով կիրառվող՝ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» արտահայտությունը ենթադրում է «հրատապ սոցիալական պահանջի» առկայություն: Այս առնչությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի անդամ պետությունները նման պահանջի առկայությունը գնահատելիս որոշակի հայեցողություն ունեն:[21]

Եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ չնայած արտահայտման ազատությունը կարևոր է բոլորի համար, այն հատկապես կարևոր է ընտրովի պաշտոններ զբաղեցնող անձանց համար: Վերջիններս ներկայացնում են իրենց

[21] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Կարակսոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary[GC]) գործով 2016 թվականի մայիսի 5-ի վճիռը, դիմումներ nos. 42461/13, 44357/13, §132, Ինկալն ընդդեմ Թուրքիայի (ՄՊ) (Incal v. Turkey[GC]) գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, դիմում no. 22678/93, § 46

ընտրազանգվածին, ուշադրություն են գրավում նրանց մտահոգությունների նկատմամբ և պաշտպանում են նրանց շահերը: Համապատասխանաբար, այս անձանց արտահայտվելու ազատության նկատմամբ միջամտությունների իրավաչափությունը ենթակա է Եվրոպական դատարանի կողմից խստագույն քննության: Եվրոպական դատարանը նման շեշտադրում է կատարել ինչպես խորհրդարանների պատգամավորների,[22] այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքային խորհուրդներ) անդամների[23] և քաղաքապետերի[24] խոսքի նկատմամբ միջամտության իրավաչափությունը գնահատելիս:

Ինչ վերաբերում է այն անձի կարգավիճակին, ում նկատմամբ ուղղված է եղել խոսքը, ապա Եվրոպական դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ թույլատրելի կամ իրավաչափ քննադատության սահմաններն ավելի լայն են, երբ այն ուղղված է քաղաքական գործչի, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններ՝ քաղաքական գործիչներն անխուսափելիորեն և գիտակցաբար իրենց խոսքը և գործողությունները ենթակա են դարձնում լրագրողների և լայն հանրության կողմից մանրակրկիտ զննության և հետևաբար պետք է դրսևորեն ավելի մեծ հանդուրժողականություն, հատկապես, **երբ հենց իրենք կատարում են այնպիսի հանրային հայտարարություններ, որոնք հավանական է, որ քննադատության կենթարկվեն:** Ավելին, թույլատրելի քննադատության սահմաններն էլ ավելի լայն են, երբ այն ուղղված է Կառավարության և ոչ թե մասնավոր անձանց կամ անգամ քաղաքական գործիչների նկատմամբ: Ժողովրդավարական հասարակությունում Կառավարության գործողությունները և անգործությունը պետք է ենթակա լինեն ոչ միայն օրենսդիր և դատական իշխանությունների, այլև հանրային կարծիքի մանրակրկիտ զննության:[25]

---

[22] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 42, Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria) գործով 2001 թվականի փետրվարի 27-ի վճիռը, դիմում no. 26958/95, § 36

[23] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 53

[24] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 32

[25] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Լոբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 54, Ռոզեյրո Բենտոն ընդդեմ Պորտուգալիայի (Roseiro Bento v. Portugal) գործով 2006 թվականի ապրիլի 18-ի վճիռը, դիմում no. 29288/08, § 42

Նշված չափանիշների հիման վրա Եվրոպական դատարանը Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալթայի գործով արձանագրել է, որ ակնկալելի է, որ տեղական խորհուրդը՝ որպես ընտրովի քաղաքական մարմին, որը բաղկացած է ընտրողների կողմից մանդատով օժտված անձանցից, պետք է դրսևորի բարձր մակարդակի հանդուրժողականություն քննադատության հանդեպ:

Եվրոպական դատարանը նաև փաստել է, որ քաղաքական խոսքի կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական բանավեճի իրավաչափ սահմանափակումների շրջանակը նեղ է:[26] Քաղաքական խոսքի լայն սահմանափակումների կիրառումն անկասկած անդրադարձ կունենա տվյալ պետությունում արտահայտման ազատության նկատմամբ հարգանքի ընդհանուր մակարդակի վրա:[27] Միաժամանակ, քաղաքական բանավեճի ազատությունն իր բնույթով բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների կամ դրա շրջանակներում հնչեցված տեղեկատվության կամ գաղափարների համար կարող են սահմանվել պատասխանատվության միջոցներ:[28] Եվրոպական դատարանն ընդգծել է, որ հանրային հետաքրքրություն ներկայացնող (կամ հանրային շահին առնչվող) հարցերով **քաղաքական բանավեճի մասնակցելիս անձինք պետք է չանցնեն այլոց իրավունքների նկատմամբ հարգանքի որոշակի սահմանները:** Միաժամանակ, նման դեպքերում **թույլատրելի է չափազանցության կամ անգամ սադրանքի որոշակի աստիճանը, այսինքն՝ իր արտահայտություններում անձը կարող է որոշ չափով անզսպություն դրսևորել:**[29]

Անդրադառնալով տեղական ինքնակառվարման մարմնում՝ համայնքային խորհրդում, տեղի ունեցած քաղաքական բանավեճին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձանց հրապարակային արտահայտման ազատությունը պաշտպանելու հանրային շահի տեսանկյունից **մունիցիպալ խորհուրդն առնվազն**

---

[26] Տես, օրինակ, Լոմբարդոն և այլոք ընդդեմ Մալտայի (Lombardo and Others v. Malta) գործով 2007 թվականի ապրիլի 24-ի վճիռը, դիմում no. 7333/06, § 55

[27] Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռ, դիմում no. 10883/05, § 33

[28] Տես, օրինակ, Կաստելլն ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի վճիռը, դիմում no. 11798/85, § 46, Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռը, դիմում no. 59405/00, § 55

[29] Տես, օրինակ, Վիլլեմն ընդդեմ Ֆրանսիայի (Willem v. France) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, դիմում no. 10883/05, § 33

խորհրդարանի հետ համեմատելի հարթակ է: Ժողովրդավարությունում խորհրդարանը կամ նման համեմատելի մարմինները քաղաքական բանավեճի համար առանցքային հարթակներ են, ուստի դրանց շրջանակներում արտահայտման ազատության իրացման նկատմամբ ցանկացած միջամտությունը արդարացնելու համար պետք է բերվեն շատ ծանրակշիռ պատճառներ:[30]

Միաժամանակ, քննարկելով խորհրդարանական բանավեճի շրջանակներում կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման իրավաչափությունը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ չնայած ժողովրդավարական հասարակությունում իր հիմնարար կարևորությանը՝ խորհրդարանական բանավեճի ազատությունը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Խորհրդարանում արտահայտման ազատության իրացումը ենթադրում է պարտականություններ և պատասխանատվություն՝ կապված խորհրդարանի արդյունավետ աշխատանքի ապահովման հետ:[31]

Անդրադառնալով քաղաքական բանավեճի ընթացքում կիրառվող վիրավորական արտահայտությունների առնչությամբ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին՝ հարկ է նկատել, որ նման խոսքի գնահատման պարագայում Եվրոպական դատարանը, որպես կանոն, կարևորել է այն հանգամանքը, թե արդյոք վիրավորական արտահայտությունները կատարվել են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ բանավեճի շրջանակներում: Այսպես, օրինակ, Ռոզեյրո Բենտոն ընդդեմ Պորտուգալիայի գործի շրջանակներում, դիտարկելով քաղաքապետի և համայնքային ժողովի խորհրդականի միջև բանավեճի շրջանակներում քաղաքապետի կողմից կատարված վիրավորական արտահայտությունները[32], Եվրոպական դատարանն արձանագրել է, որ բանավեճն

---

[30] Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի (Jerusalem v. Austria) գործով 2001 թվականի փետրվարի 27-ի վճիռը, դիմում no. 26958/95, § 40

[31] Կարասկոնին և այլոք ընդդեմ Հունգարիայի (ՄՊ) (Karácsony and Others v. Hungary [GC]) գործով 2016 թվականի մայիսի 17-ի վճիռ, դիմումներ nos. 42461/13, 44357/13, § 139

[32] Քաղաքապետը (նշված գործով դիմողը), մասնավորապես, նշել է հետևյալը. «Խորհրդական Պարոն Պ.Մ.-ն քաղաքական աուտիստ է, ով հավակնում է քաղաքական գործչի երկրորդական դերի՝ այրելով իր քաղաքական կյանքի վերջին փամփուշտները: Ես հակված չեմ արձագանքելու սադրանքներին, հատկապես երբ դրանք ցածր մակարդակի են կամ երբ գալիս են այն մարդկանցից, ովքեր քաղաքականությունում միայն գիտեն գործել մաքիավելլյան, կանխամտածված և ստոր դավաճանություն: (...) Ես կանհանգստանայի, եթե այսպիսի քաղաքական գարշահոտ հոգևոր զկռտոցները գային ինչ-որ մեկից, ով որոշակի վարկանիշ ունի: (...) Համայնքային խորհրդում նա [Պարոն Պ.Մ.] սովորաբար մի քիչ տարօրինակ վարքագիծ է դրսևորում (...) երկարաձգելով

առնչվել է հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցի, այն է՝ քաղաքապետի կողմից քաղաքային կառավարմանը: Ըստ այդմ, Եվրոպական դատարանը նշել է, որ **չնայած գործածված լեզուն վկայում է կողմերի միջև միմյանց նկատմամբ ուժեղ անձնական թշնամանքի առկայությունը՝ սակայն բանավեճը չի կարող դիտարկվել որպես պարզապես անձնական վեճ:**

Ընդ որում, ընդգծվել է այն հանգամանքը, որ **համայնքային խորհրդականը քաղաքապետի հասցեին կատարել է այնպիսի արտահայտություններ, որոնք, իրենց բնույթով վիճաբանական (polemical) էին, ուստի վերջինս պետք է ակնկալեր քաղաքապետի կողմից ուժեղ արձագանքը:**

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ դիմողն օգտագործել է սադրիչ և առնվազն ոչ էլեգանտ բառապաշար իր քաղաքական հակառակորդի նկատմամբ: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ քաղաքական սուր քննադատությունը հաճախ վերաճում է անձնական վիրավորանքների. Այդպիսին են ժողովրդավարական հասարակության երաշխիք հանդիսացող քաղաքականության և գաղափարների ազատ բանավեճի վտանգները: Համատեքստում կարդալով՝ նշված արտահայտությունները դժվար թե կարող են համարվել ավելորդ՝ հատկապես նկատի ունենալով համայնքային խորհրդականի կողմից կատարված նույնքան ծանր հայտարարությունները: Եվրոպական դատարանը նաև էական է համարել, որ խնդրո առարկա հայտարարությունները կատարվել են բանավոր բանավեճի ժամանակ, ինչի արդյունքում դիմողը հնարավորություն չի ունեցել վերաձևակերպելու, լավարկելու կամ հետ վերցնելու իր խոսքերը մինչև դրանց հրապարակային դառնալը:

Քաղաքական բանավեճի շրջանակներում կատարված վիրավորանքների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը հատկապես կարևորել է այն հանգամանքը՝ արդյոք կատարված վիրավորանքները ունեցել են փաստական հենք: Մի շարք գործերով[33] Եվրոպական դատարանն արձանագրել է, որ թեև դիմողի

հանդիպումները անբացատրելի կերպով, արձանագրության համար թելադրելով մի շարք անպատշաճություններ, վերջին հանդիպմանը ոչ պակաս քան հինգ էջի վրա:

[33] Տես, օրինակ, Լոպես Գոմես դա Սիլվան ընդդեմ Պորտուգալիայի (Lopes Gomes da Silva v. Portugal) գործով 2000 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ, դիմում no. 37698/97, § 34, Օբերշլիկն ընդդեմ

արտահայտությունները վիճահարույց են, սակայն դրանք չեն կարող համարվել անհիմն անձնական հարձակում (gratuitous personal attack), քանի որ դրանց հեղինակը հիմնվում է օբյեկտիվ բացատրության վրա: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ առանց փաստական հենքի նման արտահայտությունները կարող էին ավելորդ համարվել: Մեկ այլ գործի շրջանակներում Եվրոպական դատարանը կարևորել է, որ քաղաքական բանավեճի ընթացքում կատարված արտահայտությունն ուղղակի կապ է ունեցել այդ բանավեճի կոնտեքստի հետ և կիրառվել է որպես քաղաքական գործիչների գործունեության քննադատություն:[34] Նմանապես, Լակրուան ընդդեմ Ֆրանսիայի գործի շրջանակներում Եվրոպական դատարանը նշել է, որ թեև դիմողի՝ համայնքային խորհրդի նիստին հնչեցրած խոսքը ներառել է քննադատական և վիրավորական արտահայտություններ, այն, այնուամենայնիվ, հանդիսացել է կոնկրետ պայմանագրի կատարման շրջանակներում քաղաքապետի և նրա առաջին տեղակալի գործողությունների գնահատական: Ըստ այդմ, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ դիմողի արտահայտությունները քաղաքական վիրավորանքներ են (political invectives), որոնք քաղաքական ներկայացուցիչները թույլ են տալիս իրենց բանավեճերի ժամանակ, որոնք երբեմն կարող են բավականին բորբոքված լինել: Բացի այդ, նշված գործով ևս Եվրոպական դատարանը կարևորել է, որ դիմողի խոսքը ունեցել է փաստական հենք:[35]

Լինդոնը, Օտյակովսկի-Լորենսը և Ջուլայն ընդդեմ Ֆրանսիայի գործի շրջանակներում Եվրոպական դատարանն ընդգծել է, որ անկախ քաղաքական պայքարների ուժգնությունից, օրինաչափ է փորձել ապահովել, որ դրանք պահպանեն նվազագույն չափավորություն և պատշաճություն, հատկապես որ քաղաքական գործչի հեղինակությունը, անգամ եթե վերջինս վիճահարույց դերակատար է, պետք է օգտվի Եվրոպական կոնվենցիայով տրվող պաշտպանությունից:[36]

Ավստրիայի (Oberschlick v. Austria (No. 2)) գործով 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, դիմում no. 20834/92, §§ 32-33

[34] Շարսախը և Նյուզ Ֆերլագսգեզելշաֆթն ընդդեմ Ավստրիայի (Scharsach and News Verlagsgesellschaft v. Austria) գործով 2003 թվականի նոյեմբերի 13-ի վճիռ, դիմում no. 39394/98, § 44

[35] Լակրուան ընդդեմ Ֆրանսիայի (Lacroix v. France) գործով 2017 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռ, դիմում no. 41519/12, § 44

[36] Լինդոնը, Օտչակովչկի-Լորենսը և Ջուլայն ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Lindon, Otchakovsky-Laurens and July v. France [GC]) գործով 2007 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռ, դիմումներ nos. 21279/02, 36448/02, § 57

Եվրոպական դատարանը նաև կարևոր է համարել այն հանգամանքը՝ արդյոք հնչեցված արտահայտությունները որևէ կերպ նպաստում են քաղաքական բանավեճին: Այսպես, օրինակ, Էրբականն ընդդեմ Թուրքիայի գործի շրջանակներում Եվրոպական դատարանը նշել է, որ արտահայտման ազատությունը ենթադրում է պարտականություններ, որոնք կարող են ներառել նաև այլոց անհիմն վիրավորող արտահայտություններ և այդպիսով խախտել նրանց իրավունքները և որոնք, ըստ այդմ, որևէ կերպ չեն նպաստում հանրային բանավեճին:[37]

Վերոգրյալի լույսի ներքո անդրառնալով Տիգրան Ավինյանի կողմից դրսևորած վարքագծին՝ Հանձնաժողովը նախ արձանագրում է, որ սույն վարույթի շրջանակներում դիտարկվող արտահայտությունները վերջինս կատարել է Երևանի ավագանու նիստի ընթացքում՝ հանդես գալով որպես Երևանի քաղաքապետ և նիստը վարող: Երևանի ավագանին՝ որպես քաղաքային օրենսդիր մարմին, իր բնույթով համեմատելի է խորհրդարանի հետ, ուստի ավագանու նիստի մասնակիցներն օգտվում են կարծիքի արտահայտման ազատության հատկապես լայն շրջանակից: Այս առումով, Հանձնաժողովը նաև ընդգծում է Երևանի քաղաքապետի՝ որպես ընտրված քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի՝ կարծիքի արտահայտման ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի և դրա սահմանափակման խիստ նեղ հնարավորությունների կարևորությունը:

Բացի այդ, Տիգրան Ավինյանի խոսքն ուղղված է եղել Երևանի ավագանու անդամ Մանուկ Սուքիասյանին, ով, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պետք է առավել մեծ հանդուրժողականություն դրսևորի իրեն ուղղված քննադատության նկատմամբ, անգամ եթե այն պարունակում է վիրավորական կամ սադրիչ արտահայտություններ: Միաժամանակ, նույնը վերաբերելի է նաև Տիգրան Ավինյանին, քանի որ Երևանի քաղաքապետը՝ որպես քաղաքային գործադիր մարմին, պետք է ակնկալի, որ կարող է արժանանալ ինչպես լայն հանրության, այնպես էլ Երևանի ավագանու մյուս անդամների խիստ քննադատությանը, հատկապես ավագանու նիստերին, որոնք իրենց բնույթով քաղաքական ազատ բանավեճի կարևորագույն հարթակ են:

---

[37] Էրբականն ընդդեմ Թուրքիայի (Erbakan v. Turkey) գործով 2006 թվականի հուլիսի 6-ի վճիռ, դիմում no. 59405/00, § 55

Քննարկվող դեպքում Տիգրան Ավինյանի խոսքի իրավաչափության գնահատման տեսանկյունից կարևոր է այն սույն թվականի ապրիլի 16-ին կայացած՝ Երևանի ավագանու ամբողջ նիստի ընթացքում ծավալված քննարկումների համատեքստում և ոչ դրանցից վերացարկված դիտարկելը:

Այսպես, Երևանի ավագանու նիստի մեկնարկից տարբեր խմբակցությունների ներկայացուցիչների միջև հանրային հետաքրքրություն ներկայացնող մի քանի հարցերի շուրջ ծագել էին վեճեր, որոնք ներառել էին վիրավորական արտահայտությունների փոխանակում և բորբոքված ու անգամ որոշ դեպքերում բարձր տոնայնության օգտագործմամբ քննարկումների անցկացում: Մասնավորապես՝ քննարկումներն ի սկզբանե առնչվել են Երևանի ավագանու նիստերի օրակարգում ներառված հարցերի զեկուցմանը, հարցերը որպես «զեկուցվող» և «ոչ զեկուցվող» որակելուն, այնուհետև վերաճել են նաև Երևան քաղաքի կանաչապատման քաղաքականության, մասնավորապես՝ ծառահատման անհրաժեշտության և նպատակահարմարության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ներկայումս առկա ավելի լայն համատեքստի՝ Լեռնային Ղարաբաղի, արտաքին անվտանգության ոլորտներում նախկին և ներկա ՀՀ կառավարությունների վարած քաղաքականությունների շուրջ վեճերի:

Որպես նիստը վարող՝ Տիգրան Ավինյանը միջամտել է վիճաբանություններին կամ այլ կերպ արձագանքել է դրանց, հորդորել Երևանի ավագանու անդամներին ներկայացնել նիստի օրակարգի առարկա հարցերին վերաբերելի հարցադրումներ: Երևանի ավագանու անդամներ Անի Խաչատրյանի և Մանուկ Սուքիասյանի վիճաբանությանը միաժամանակ արձագանքել են նիստերի դահլիճում գտնվող մի շարք ներկաներ (արձագանքները կատարվել են առանց խոսափողի, ինչի արդյունքում դրանց հիմնական մասը հստակ լսելի չէ), ինչը հանգեցրել է նիստի բնականոն ընթացքի ընդհատման և աղմուկի:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Տիգրան Ավինյանի խոսքը հաջորդել է նշված իրարանցմանը և արվել է այն համատեքստում, երբ նիստի ընթացքում ներկաների կողմից պարբերաբար հնչեցվել են վիրավորական կամ սադրիչ բնույթի արտահայտություններ, և տեղի են ունեցել վիճաբանություններ Երևանի ավագանու տարբեր անդամների միջև:

Այս համատեքստում է, որ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում դիտարկել ինչպես Տիգրան Ավինյանի խոսքի բովանդակությունը, կիրառված առանձին արտահայտությունները, այնպես էլ խոսքի ձևը՝ ձայնի տոնայնությունը և այլ մանրամասները:

Հանձնաժողովն ընդգծում է, որ Տիգրան Ավինյանի խոսքն անդրադարձել է հանրային հետաքրքրություն ներկայացնող մի քանի հարցի՝ ավագանու անդամների կողմից նիստի ընթացքում էթիկայի կանոնների պահպանմանը և ՀՀ նախկին իշխանությունների հետ ավագանու ընդդիմադիր անդամների փոխկապակցվածությանը: Ըստ այդմ, նրա խոսքն ակնհայտորեն կատարվել է քաղաքական բանավեճի ընթացքում:

Դիրքորոշմամբ նշվել է, որ Տիգրան Ավինյանի խոսքերը կատարվել են ի հակադարձումն Մանուկ Սուքիասյանի խոսքերին, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Տիգրան Ավինյանը նշել է՝ Ձեր իսկ խոսքերին Ձեր ոճով պատասխանեմ: Բացի այդ, Դիրքորոշմամբ նշվել է, որ Տիգրան Ավինյանի կիրառած արտահայտությունները հայոց լեզվում լայնորեն տարածում ունեցող, հասարակության տարբեր շերտերին ընկալելի, ինչպես առօրյա խոսքում, այնպես էլ գործընկերական հարաբերություններում հաճախ օգտագործվող դարձվածքներ են, որոնք թեև վերջինիս կողմից օգտագործվել են փոքր-ինչ այլափոխված կերպով, սակայն չեն կորցրել իրենց դարձվածաբանական իմաստն ու նշանակությունը և իրենց մեջ չեն պարունակում որևէ վիրավորական երանգ, իսկ դրանց օգտագործումը չի կարող գնահատվել որպես բարեվարքության և հարգալիրության սկզբունքի խախտում:

Վերը նշվածի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ հետևյալին.

Բառամթերքի օգտագործման նախընտրությանը և դրա իմաստաբանական վերլուծությանն անդրադառնալիս անհրաժեշտ է ցուցաբերել միօրինակություն և նմանաձևություն: Սա իրենից ենթադրում է, որ իմաստաբանական քննության ժամանակ բոլոր բառերն ու արտահայտությունները նույն գործի համատեքստում պետք է բացատրել դրանց իմաստաբանական ողջ ընդլայնմամբ, այլ ոչ թե մի բառի դեպքում հաշվի առնել դրա առաջնային և ելակետային իմաստը, մեկ այլ բառի կամ արտահայտության դեպքում՝ բառարանային վերջին կամ ոչ գործածական իմաստը:

Բառերի իմաստաբանական նկարագիրը (այդ թվում՝ նաև բառարաններով) տալիս պետք է հաշվի առնել այն, որ բառերը ժամանակի ընթացքում ստանում են նոր իմաստներ և նոր կիրառելիություն:

Այսպես՝

1. «Ղալաթ» գավառական բառը, որ փոխառված է արաբերենից, տաճկերենից, թեև իր առաջնային իմաստով նշանակում է «սխալ», «թերություն», «անհարկի գործ» (Ստեփան Մալխասեանց, «Հայերեն բացատրական բառարան», 1944, էջ 183), այնուամենայնիվ, ունի թանձրացական իմաստ, որն արտահատվում է «ղալաթ անել» հարադիր բայով՝ գործածվելով որպես խիստ հանդիմանություն («Արդի հայերենի բացատրական բառարան», Էդուարդ Բագրատի Աղայան, Երևան, 1976, էջ 954): Հատկանշական է, որ այս բացասական/հանդիմանական իմաստը տարբեր լեզուներում ևս պահպանվել է: Ինչպես՝ վրացերեն «ղալատի» ձևով բառն ունի «դատապարտելի արարք» և «դավաճանություն» իմաստները (Վրացերեն-հայերեն բառարան, Ռամազ Կ. Գորգաձե, Երևան, 2005):

2. «Հաչել» բառին անդադառնալիս, պետք է նկատել, որ բառի առաջնային և ելակետային իմաստը «կաղկանձել», «վնգստալ», «հաչոց արձակել»-ն է (Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Աշոտ Մուրադի Սուքիասյան, Երևան, 2009, էջ 595): Բառը հանրային ընկալման տեսանկյունից հանդիսանում և յուրացվում է որպես վիրավորական արտահայտություն, քանի որ կենդանուն բնորոշ բնաձայնությունը վերագրվում է մարդուն: Դիրքորոշմամբ նշվել է, որ «հաչել» բառը փոխաբերական իմաստով բացատրվում է «չարախոսել», միաժամանակ, ներկայացված իմաստը բացատրական բառարաններում բառի երրորդ կամ չորրորդ՝ փոխաբերական իմաստն է, որ կարող է ընկալվել միայն համապատասխան խոսույթում:

3. «Գլուխը պատին տալ»/«գլուխդ պատով ես տալիս» արտահայտությունը ասում են, երբ մեկի արածին կամ ասածին համաձայն չեն (Պետրոս Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, 2011): Դարձվածքն ունի «վիրավորական» նշումը, ինչն իսկ վկայում է, որ դրա կիրառումը ընկալվում է որպես վիրավորանք:

4. Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, (...) որը խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր (Բադիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, ինչպես նաև Բադիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000): Ուստի, Դիրքորոշմամբ ներկայացված այն միտքը, որ Տիգրան Ավինյանի օգտագործած դարձվածքները, լինելով փոքր-ինչ այլափոխված, չեն կորցրել իրենց դարձվածաբանական իմաստն ու նշանակությունը, չի բխում դարձվածք եզրույթի լեզվաբանական սահմանումներից և դրա ներքո հասկացվող կապակցության բնույթից, քանի որ դարձվածքի բաղադրիչներից յուրաքանչյուրն այդ կապակցության մեջ ձեռք է բերում նոր նշանակություն, ուստի կապակցության մեջ որևէ բաղադրիչի փոփոխությունը խեղաթյուրում է դարձվածքի արտահայտած իմաստը:

5. Բացի այն, որ օգտագործվող բառերն ու դարձվածքներն իրենց իմաստային նրբերանգները ստանում են համատեքստում, ոճականորեն կարևոր են նաև հնչերանգներն ու առոգանությունները: Դրանք կարող են արտահայտել խոսողի նպատակադրությունն ու բառամթերքի ընտրության պատճառները: Քննարկվող դեպքում Տիգրան Ավինյանի խոսվածքը բարձրատոն է և հստակ արտահայտում է հանդիմանություն:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Տիգրան Ավինյանի կողմից կիրառված արտահայտությունների մի մասն ակնհայտ վիրավորական երանգ է ունեցել:

Հանձնաժողովն արձանագրում է, որ քաղաքական բանավեճի ընթացքում սադրիչ կամ անգամ կոպիտ բառամթերքի օգտագործումը կարող է ակնկալելի լինել, հատկապես երբ բանավեճը վերաբերում է տվյալ հասարակությունում լայնորեն քննարկված կամ բարձր կարևորություն ունեցող հարցերի: Քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք անխուսափելիորեն բախվում են հանրային քննադատության և կարող են ակնկալել, որ նման քննադատությունը ոչ միշտ է, որ ձևակերպված է լինելու մեղմ բառամթերքով և ոճով, հատկապես, երբ իրենք ևս կիրառել են սադրիչ ու վիրավորական խոսք:

Վարքագծի կանոնակարգի 36-րդ և 37-րդ կետերով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն,

զսպվածություն ցուցաբերելու և այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Նշված կանոններն ենթադրում են, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս պետք է խուսափեն այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պատիվը կամ արժանապատվությունը վիրավորող արտահայտությունների կիրառումից: Զսպվածության պարտականությունը ենթադրում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պետք է քաղաքավարի և բարեկիրթ լինեն՝ անկախ դիմացինի վարքագծից:

Երևանի քաղաքապետը, հանդիսանալով Վարքագծի կանոնները պահպանելու պարտականություն ունեցող սուբյեկտ, սահմանափակված է դրանցով: Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքական բանավեճի շրջանակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից վերոնշյալ կանոններով սահմանված բարեկրթության, քաղաքավարության, զսպվածության և այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականության խախտում արձանագրելու շեմն ավելի բարձր է, քան այլ լիազորությունների կատարման շրջանակներում դրսևորած վարքագծի դեպքում: Այլ խոսքերով, վարքագիծը, որն այլ լիազորությունների կատարման շրջանակներում կարող է դիտարկվել որպես Վարքագծի կանոնների 36-րդ և 37-րդ կանոններին ոչ համապատասխան, քաղաքական բանավեճի դեպքում կարող է իրավաչափ դիտվել:

Միաժամանակ, Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ անգամ քաղաքական բանավեճի շրջանակներում կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել. խիստ անձնական բնույթի կամ քաղաքական բանավեճի թեմայի և համատեքստի հետ որևէ կերպ չկապված վիրավորական արտահայտությունների կիրառումը չի կարող Վարքագծի կանոնագրքի՝ վերոնշյալ կարգավորումների համատեքստում իրավաչափ դիտվել, անգամ երբ խոսքը գնում է խորհրդարանում կամ դրա հետ համեմատելի այլ ատյաններում քաղաքական բանավեճի մասին:

Նկատի ունենալով, որ Վարքագծի կանոնագիրքը կիրառելի է համայնքի ղեկավարների, սակայն ոչ՝ ավագանու անդամների նկատմամբ, Հանձնաժողովն օրենքով սահմանված իր լիազորություններով սահմանափակված լինելով՝ չի կարող գնահատել Մանուկ Սուքիասյանի խոսքի իրավաչափությունը: Այնուամենայնիվ, սույն

վարույթի շրջանակներում էական է Հանձնաժողովի կողմից դրանց անդրադարձը: Այս համատեքստում Հանձնաժողովն արտահայտում է իր մտահոգությունը համայնքների ավագանիների վարքագծի կանոնների բացակայության կապակցությամբ: Հատկանշական է, որ Հանձնաժողովը սույն թվականի ապրիլի 16-ի Երևանի ավագանու նիստի շրջանակներում ավագանու անդամների կողմից հնչեցված խոսքի առնչությամբ գրություններ է հասցեագրել ավագանու խմբակցությունների ղեկավարներին՝ առաջարկելով քաղաքական բոլոր հարթակներում պահպանել բարեվարքության և հարգալիրության օրենսդրական սկզբունքները, ցուցաբերել զսպվածություն, չչարաշահել քաղաքական խոսքի սահմանները, ինչպես նաև հարգել այլոց հիմնարար իրավունքները՝ քաղաքացիների շրջանում չառաջացնելով անվստահություն և հանրային իշխանության, տվյալ դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմնի հեղինակության նվազեցում:

Քննարկվող դեպքում Տիգրան Ավինյանի կողմից կատարված վիրավորական արտահայտությունների մի մասը կատարվել է Մանուկ Սուքիասյանի կամ ավագանու այլ անդամների վարքագծի կամ քաղաքական դերակատարման քննարկման համատեքստում: Ավելին, Տիգրան Ավինյանը արձագանքել է Մանուկ Սուքիասյանի խոսքերին և իր խոսքում կիրառել վերջինիս կողմից օգտագործված կամ տոնայնությամբ և հնչերանգով դրանց համարժեք բառեր ու արտահայտություններ: Վերոնշյալի մասին է վկայում նաև այն, որ Տիգրան Ավինյանի վիրավորական հնչերանգ ունեցող որոշ արտահայտությունների կիրառումից հետո նշել է՝ Ձեզ իսկ Ձեր ոճով պատասխանեմ:

Այսպես, ինչպես Մանուկ Սուքիասյանը, այնպես էլ Տիգրան Ավինյանը միմյանց և Երևանի ավագանու այլ անդամների վարքագիծը նկարագրելու համար կիրառում են «շան հաչելու» հետ կապված դարձվածքներ («շունը հաչում ա, քարավանը շարունակում ա իր ճանապարհը»՝ Մանուկ Սուքիասյանի դեպքում և «շունը հաչա, քամին փչի»՝ Տիգրան Ավինյանի դեպքում): Նմանապես, կիրառելով «կաբինետներից հանել ու դուրս ենք շպրտել» արտահայտությունը՝ Տիգրան Ավինյանն արձագանքում է Մանուկ Սուքիասյանի խոսքին առ այն, որ «էդ խոլերան մի օր մաքրվելու ա բոլոր կառավարական կաբինետներից»:

Վերոգրյալը հաշվի առնելով և նկատի ունենալով, որ սույն թվականի ապրիլի 16-ի՝ Երևանի ավագանու նիստի ամբողջ ընթացքում բազմիցս ավագանու անդամների միջև տեղի են ունեցել վիճաբանություններ, որոնք միայն 5 ժամ անց վերաճել են այն ուժգնության և բորբոքման բանավեճին, որը քննարկվում է սույն վարույթի շրջանակներում՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Տիգրան Ավինյանի կողմից վերոնշյալ արտահայտությունների կիրառումը չի կարող համարվել անհիմն անձնական վիրավորանքների կիրառում, որոնք հատում են իրավաչափության սահմանը: Ընդ որում, Մանուկ Սուքիասյանը, հանդիսանալով քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ և կիրառելով սադրիչ ու վիրավորական արտահայտություններ, կարող էր ակնկալել, որ ի պատասխան դրանց՝ իր հասցեին ևս կհնչեն համեմատելի վիրավորական բնույթի արտահայտություններ:

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում առանձին անդրադառնալ Տիգրան Ավինյանի խոսքի հետևյալ հատվածին.

«Կոռեկտության սահմանները հենց կսովորեք, որտեղ են էդ սահմանները սկսվում և ավարտվում, այ որ լեզվին զոռ չտաք, միգուցե դահլիճից Ձեր խոսալու ժամանակ էդքան ելույթներ չհնչեն: Ի՞նչ «խոլերա», ի՞նչ «շուն»: Ինչ խոլերա, ինչ շուն: (Դահլիճից արձագանքում են՝ *«Լավ ա անում:»*) ***<u>Ի՞նչ ա անում: Ղալաթ ա անում: Ղալաթ ա անում, ասեցի: Գլուխը պատին ա տալիս, պատն էլ գլխին ա տալիս:»:</u>***

Հանձնաժողովը վերահաստատում է Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումն առ այն, որ քաղաքական բանավեճի շրջանակներում փաստական հենք ունեցող և այլ անձի վարքագիծը կամ քաղաքական հայացքները քննադատող վիրավորանքները կարող են դիտարկվել իրավաչափ: Միաժամանակ, Տիգրան Ավինյանի ընդգծված խոսքը կատարվել էր ոչ թե ի պատասխան Մանուկ Սուքիասյանի, այլ արձագանքելով ավագանու այլ անդամների խոսքին: Ընդ որում, Տիգրան Ավինյանը մինչ այդ արդեն իսկ հայտնել էր Մանուկ Սուքիասյանի վարքագծի վերաբերյալ իր դժգոհությունը և արտահայտել այդ դժգոհությունն ինչպես տոնայնությամբ, այնպես էլ կոշտ բառամթերքի կիրառմամբ: Նշվածից հետո արված՝ «գլուխը պատին ա տալիս, պատն էլ գլխին ա տալիս» արտահայտությունը որևէ կերպ չի նպաստում տվյալ դեպքում ծավալված քաղաքական բանավեճին, չի մեկնաբանում կամ նկարագրում

Մանուկ Սուքիասյանի վարքագիծը, այլ խիստ վիրավորական կերպով ևս մեկ անգամ արտահայտում է դրա հետ կապված անհամաձայնությունը:

Ընդ որում, հարկ է նկատել, որ Վարքագծի կանոնագրքի 36-րդ կետով սահմանված զսպվածություն պահպանելու պարտականությունն ենթադրում է, որ անգամ քաղաքական բանավեճի ընթացքում սադրիչ և վիրավորական խոսքի բախվելու պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք չպետք է հատեն բարեկրթության և այլոց պատվի ու արժանապատվության նկատմամբ հարգանքի որոշակի սահմանը:

Տիգրան Ավինյանի ընդգծված խոսքը վերոգրյալ մեկնաբանության լույսի ներքո դիտարկելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ չունենալով վիրավորանքից զատ այլ լրացուցիչ իմաստային և քաղաքական արժեք՝ այն հատում է իրավաչափության սահմանները և հանգեցնում Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի խախտման:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերը՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ